

Հ. ԱՆԱՆԻԱ ԳՈՆՏԱԳՃԵԱՆ

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՄԱՐ

Ա. Յ Փ Ե Ս Տ Ա Ն

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

1982

Վ Ի Պ Ա Ս Ա Ն Ա Կ Ա Ն , Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ԵՒ ԱՅԼ ԸՆԹԵՐՑՄԱՆ ԳՐՔԵՐ

Զույց ֆր.

ԱՂԱՆԻ — Վ. Գ. Փ. ՄԷՐԻՄԷԻ. Թրգ. Հ. Գ. ճեպուհան	1 20
ԱՂԲԱՐ ԹՈՎՄԱՍԻ ՏՆԱԿԸ. — Վ. Գ. ամերիկեան զե. բիներու կեանքէն (Գ. Տպ.)	4 —
ԱՆԵԱ ԿԱՄ ՍԷՐ ԾՆՈՂ ԱԿԱՆ. — Վ. Գ. ՏԸ ՄԱՐԷԹԻ. Թրգ. Հ. Օ. Գաբրիէլեան	1 —
ԱՆՈՐ ԵՐԹԱՆՔ. — Տ. ՄԷՆՔԻՆՎԻՉԻ. Թրգ. Հ. Ա. Յով. սեֆեան	- 80
ԱՌԱՄՔ ԱԶԳԱՅԻՆՔ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՔ. — Տ. Ս. ժՈՒՆԱՐՏԵԱՆ	- 60
ԱՌԱԿՔ ԵՒ ՎԱՐՔ ԵԶՈՎԸՈՍԻ (ընդ մամլոմ)	***
ԱՌԱԿՔ (ՄՐԵԱՆԱԿ). — Երազմարտչ շահազան Նեղինակներէ	- 50
ԱՌԱԿՔԵՒ ՔԵՐԹՈՒԱՆՔ. Ինքնագիր և թրգ. Հ. Քե. բովբէ Գաբրիէլեանի	4 —
ԱՌՁԵՈՒՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ. — ՌԱՐԷԻ. Թրգ. Հ. Գ. Նազարեթեան	1 50
ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ. — Վ. Գ. Յ. ՊԱՐՐԻՆԻ. Թրգ. Հ. Կ. Իսկէնտերեան	2 —
ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ. — Տանգէի. Թրգ. Հ. Ար. Ղազի. պատկերազարդ	4 —
ԱՔՍՈՐԱԿԱՆՔ Ի ՍԻՊԵՐԻԱ. — Վ. Գ. Գրար. Տիկիմ ՔՈՔԷՆԻ. Թրգ. Հ. Ե. Հեբովիզ	1 50
ԲԵԼԻՍԱՐԱՅ ԱՐԿԱՆՔ. — Վ. Գ. ԺԱՆՆԻՍԻ. Գրար. Թրգ. Հ. Ե. Հեբովիզ	1 —
ԲԻԶԶԻՈՒԱ. — Վ. Գ. ՄԷՆԳԻՆԻ. Թրգ. Հ. Գ. Նազարեթեան	1 —
ԳԵՆՈՎԱԲԷ. — ռուսաւոր Վ. Գ. զրեց Տ. Վ. ՊՈՒՏՈՒՐԵԱՆ	1 30
ԳՈՐԾԱՆՈՐՔ. — Խորհուրդներ բարոյ. և անտեսական	1 —
ԳՐԱԳԱՐԱՆ ԹԱՏՐԵՐԳԱԿԱՆ. — 22 հատք. հատք կ'արժէ	- 80
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՂՋԿԱՆՑ. — ՅԵՆՆԵՆԻ. Թրգ. Հ. Ա. Գաբրիէլեան	2 —

ԱՊՍՊՐԱՆՔՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ

IMPRIMERIE ARMÉNIENNE

St. Lazare

VENISE (Italie)

ԱՅԳԵՍՏԱՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ



Ն Ա Լ Է Ր

Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան

Հիմնարկութեան կողմէ

Հայկական ՍՍՌ Գիտութիւնների

Ակադեմիայի Մատենադարանին

1966

491.99(075)

493

Հ. ԱՆԱՆԻԱ ԳՈՆՏԱՔՃԵԱՆ

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՄԱՐ

Ա Յ Գ Ե Ս Տ Ա Ն

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



in
774

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

1932



ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԱՇԱԿԵՐՏԱՑ

ԳԻՏԷՔ սիրելի պատանիներ որ ձեր մտքերը արգասաբեր կոյս երկիրներ են: Դուք, այդ մատաղ հասակին՝ շուտով կը պտղաբերեք այն ամեն հուշերը՝ որ կը ցանոջին ձեր մտքին մէջ:

Դուք ամէնքդ ալ պիտի ապրիք օգտակար շրջաշուրջ ձեր անձին, ձեր ծնողքին և ձեր ազգին. ներկայ դարուս՝ գիտութեամբ միայն կրնաք հասնիլ ձեր նպատակին:

Գիտութեան առաջին աստիճանը՝ ընթերցումն է. և ընթերցարանիս առաջին հատորը ձեզի ընծայած ստեղծելու՝ մեզի միակ նպատակ չըրած ենք, այնպիսի համեղ, հետաքրքրասիւս, գեղեցիկ յօդուածներու փոռնջ մը կազմել՝ որ դուք ո՛չ բէ միայն ընթերցման վարժարիւն ընեք՝ այլ և սիրեք ընթերցումը որ ձեր ամբողջ կեանքին՝ միակ հաշտարիւն և անբաժան ընկերը պիտի շրջայ:

Ընթերցարանիս մէջ գնտեղած ենք նաև գեղարուեստական նկարներ: Ինչպէս որ ընթերցումը ձեր մտքին՝ այնպէս ալ նշանաւոր նկարիչներու գործերը ձեր հոգոյն մէջ ազնիւ զգացումներ պիտի արթնցնեն:

Մեր այս ընթերցարանը, կը յուսանք բէ ձեր մաքուր մտքերուն և սրտերուն մէջ բարի զգացումներ պիտի սերմանէ, և դուք շուտով պիտի պտղաբերեք: Այս է մեզ անկեկարած վարձատրութիւնը:



Ա Յ Գ Ե Ս Տ Ա Ն



ԳՈՂՈՐՇԻՆ՝ ԵՒ ԽՈՐՈՎԱԾԸ՝

Եզրպտոսի Աղեքսանդրիա քաղաքին մէջ կան փո-
ղոցներ՝ ուր սարակինոս³ խոհակերներ⁴ կերակուր կը
ծախեն, և ժողովուրդը հոն կը գտնէ ամենէն աւելի մա-
քուր և համեղ⁵ կերակուրները: Երկուշաբթի օր մը,
աղքատ սարակինոս մը՝ որ դրամ չունէր, Ահմէտ անու-
նով խոհակերի մը խանութին դիմացէն անցաւ, և որով-
հետև դրամ չունէր, ձեռքի հացը խորովածին տապակին⁶
վրայ բռնեց ու թողուց որ լաւ մը ծծէ անկէ բուրած
գոլորշին, և ապա կերաւ: Ահմէտ՝ որ այն առաւօտը
լաւ առուտուր չէր ըրած, նեղուեցաւ, և խեղճ սարա-
կինոսին օձիքէն⁷ բռնելով. «Վճարէ առածիդ զինը»
պոռաց: Խեղճ սարակինոսը պատասխանեց. «Ես քու

1. Գոլորշի, շոգի. — 2. Խորոված, տապկուած միս. — 3. Սարա-
կինոս, տաճիկ ցեղ մը. — 4. Խոհակեր, կերակուր եփող. — 5. Համեղ,
համով, ախորժելի. — 6. Տապակ. տ. թալա. — 7. Օձիք, զգեստի
վզին մասը:

խոհանոցէդ¹ միայն գոլորշի առի»։ «Տո՛ւր, ուրեմն, անոր զինը» կրկնեց Ահմէտ։ Խնդիրը դատաւորին զիմացը ելաւ։ Սուլթանը իր թագաւորութեան մէջ գտնուող գիտունները հաւաքեց և անոնց զիմացը դրաւ այս խնդիրը որպէս զի լուծում մը տան։ Գիտունները սկսան վիճել, ոմանք աղքատին իրաւունք կու տային, ուրիշներ՝ Ահմէտին։ Վերջապէս հետեւեալ վճիռը տուին.

«Նկատելով որ աղքատը գոլորշին միայն վայելելու է առանց խորովածին դպչելու, թո՛ղ առնու դրամ մը և զայն զարնէ սեղանին։ Գրամը ձայն կու տայ, և այն ձայնով խոհակերը վճարուած համարուի»։

Այնպէս ալ հրամայեց Սուլթանը։ Ահմէտ՝ փոխարէն խորովածին գոլորշիին, դրամին հնչիւնը ստացաւ։

ՀԻՆ ԻՏԱԼ. ԱՌԱԿ

ԳԻՆՈՎԸ ԵՒ ԻՐ ԿԻՆԸ

Կին մը անուղղայ² զինով էրիկ մ՝ ունէր։ Զինքը այդ ախտէն³ ետ կեցնելու համար ամէն տեսակ միջոց գործածելէն վերջ, մտածեց անոր կրօնական զգացմունքը ձեռք աւնուլ ու զրկեց քահանայի մը որպէս զի խոստովանանք ըլլայ։ Քահանայն անոր դժոխք սպառնացաւ եթէ ետ չկենայ այդ ախտէն, և յանձնարարեց որ գէթ պզտի գաւաթով խմէ։ Եւ որովհետեւ մարդը առաջընէ աւելի կը խմէր, ու օրուան մէջ, քիչ քիչ խմելու համար, զործը կը ձգէր, ուստի երբ դարձաւ նորէն խոստովանանք ըլլալու համար, խոստովանահայրը ապսպրեց

1. Խոհանոց, կերակուր եփելու տեղ. ա. աշխատէ. — 2. Ամուղղայ, որ չի շփուիբր. — 3. Ախտ, դէշ սովորութիւն.

այս անգամ որ չափով¹ խմէ: Մարդը գոհ մնաց, և քիչ ժամանակի մէջ շատ աւելի զինի կը խմէր: Կինը վերջին փորձ մ'ալ բրաւ. օր մը տեսաւ որ, բոլորովին զինով, կը քնանար, այնպէս շապկանց, գերեզման տանել տուաւ, ժամկոչին ալ ըսաւ որ անկիւն մը պահւրտի: Մարդը՝ զինին զլխէն թափելէն վերջ, արթնցաւ ու սկսաւ կինը կանչել: Ժամկոչը այլանդակ ձայնով մը պատասխանեց. «Հոս կին չկայ. դժոխքին մէջն ես»: «Գինի կը ծախէ՞ք»: «Լիդրոն մէկ ոսկի է»: «Է՛յ, սատանայ, ես ալ անոր համար կը կանչէի կինս, խնդրեմ, աթոռին վրայ դրուած բաճկոնակիս գրպանը զրամ պիտի ըլլայ. ինձի կէս լիդրոյ զինի բեր»:

Կ. Մ. ՌՈՒՖՈՅ

ԹԻՍՄԱՅՐԸ (ՀէքլեամԹ)

Երէկ իրիկուն, — սկսաւ պատմել լուսինը, — բարձր տուներով շրջապատեալ գաւիթի մը մէջ տեսայ թըխսմայր մը իր տասնումէկ ձագերովը: Գեղեցիկ փոքրիկ աղջիկ մը անոնց մէջ ցատկեց. թխսմայրը՝ սարսափած, սկսաւ կռկռալ և թեւերուն տակը ծածկել ձագերը:

Փոքրիկ աղջկան հայրը յանդիմանեց զինքը, ու ես շարունակեցի իմ ճամբաս այլ ևս անոնց վրայ չմտածելով: Այս իրիկուն, նիշտ քանի մը վայրկեան առաջ, դարձեալ վար գաւիթին վրայ նայեցայ. լուռ էր ամէն բան: Յանկարծ տեսայ մի և նոյն փոքրիկ աղջիկը՝ որ յուշիկ յուշիկ² կը քալէր հաւնոցին քովէն. բացաւ հաւ-

1. Չափը երկու լիդրոյ հեղուկ կը տանի: Ուրեմ իւրաքանչիւր անգամին երկու լիդրոյ մէկէն պիտի խմէր, թէպէտ քահանային ըսածը չափէ դուրս չիմեն էր... — 2. Յուշիկ յուշիկ, կամաց կամաց:

նոցին դուռը և դէպ ի թխամայրն ու ձագերը գնաց՝
որոնք ճիւ ճիւ պոռալով ու թևերնին թօթուելով ասդին
անդին ցրուեցան, աղջիկը անոնց ետևէն վազեց...
Որոշ կը տեսնէի տեսարանը, վասն զի պատին ճեղ-
քուածքէն կը դիտէի: Իրաւցնէ զայրոյթ կը զգայի այդ
փոքրիկ աղջկան դէմ, ու շատ գոհ եղայ, երբ հայրը




Թխամայրը

անոր թևէն բռնելով, աւելի խիստ կերպով յանդիմանեց
զինքը:

Աղջիկը զլուսը կախեց. արցունքի խոշոր կաթիլներ
մարգարտի պէս կը փայլէին կապոյտ աչքերուն մէջ:

— Հոս ի՞նչ կ'ընէիր, — հարցուց հայրը: — Կ'ու-
զէի համբուրել հաւը և ներումն խնդրել երէկուան ըրա-
ծիս համար, — պատասխանեց աղջիկը, — բայց չէի
համարձակիր քեզի ըսելու...:

Հայրը՝ յուզուած, փոքրիկ անմեղին ճակատը, աչ-
քերը և բերանը համբուրեց:



Հ. Բ. Բուշմերեան

Ծ Ա Ղ Կ Ո Ւ Ն Ք

Մէկ պարտիզի մը մէջ ծաղկունը զանազան
 կը ծաղկէին հոտով տեսքով աննրման.
 Ոմանք ծառոց փաթթըւելով կ'ելլէին,
 ինչպէս բաղեղն և պատատուկ¹
 Եւ այլք ցածուկ կը բացուէին ի գետնին
 ինչպէս վէռվէնն² ու հըրանունկ³ :

1. Պատատուկ, փաթթըւող բոյս մը: — 2. և 3. ծաղիկ տեսակներ:

Հոն զբտնըւէր ամէն տեսակ,
 Բարդ բարդ մեխակ, կարմիր՝ ճերմակ.
 Իսկ շուշաննեբ՝ վայրի՝ ջրի՝ և հովտաց՝
 Կը բացուէին ամէն օր նոր ի նորանց:
 Բուրաստանին՝ մէկ շուք տեղ՝
 Կ'ապրէր քաշուած և մանուշակ աչագեղ՝:
 Օր մի օրանց առտուանց,
 Գլուխն ի վեր, շիփ-շիտակ,
 Կայնած շուշանն ըսպիտակ՝

Յոխորտարար Մանուշակին զայս ասաց.

«Քա Մանուշակ, ո՛ւր մտեր ես.
 «Հոտըդ կ'առնում, դուն՝ չկաս,
 «Ափսոս չէ՞ քեզ, դուն մեղք չե՞ս,
 «Այդպէս ինչո՞ւ խեղճ մընաս...
 «Թէպէտ հասակդ է փոքրիկ,
 «Այլ աչերդ են խորոտիկ՝
 «Դու մէկէ մ'ալ ամբշնալու բան չունիս,
 «Կարճ հասակէդ քաշուիլ պէտք չէ քեզ, հոգիս»:

Այն Շուշանին սընապարծ
 Յոխորտանքին՝ փոխադարձ՝
 Մեր Մանուշակն հեզ ու խոնարհ
 Դարձաւ ասաց հանդարտարար.
 «Ազնիւ սըրտիդ, պերճ՝ Շուշան,
 «Շնորհակալ եմ բիւր անգամ,
 «Այլ կը խնդրեմ, ինձ համար

1. Հովիտ, դաշտ ու ձոր. — 2. բուրաստամ, ծաղկանոց, ծաղիկ-
 ներու պարեգէլ. — 3. Աչագեղ, գեղեցիկ աչք ունեցող. — 4. խորո-
 տիկ, գեղեցիկ. — 5. Յոխորտամք, գոռոզութիւն. — 6. Պերճ, փառաւոր,
 անուանի.

« Դու մի՛ մաշուիր ու հոգար,
 « Իմ վիճակէս ես գոհ եմ,
 « Այս տերևոց շուքին տակ՝
 « Ազատ կ'ապրիմ հովէն մըրկէն »:

Այսպէս անցաւ այն առաւօտ,
 Բայց ահա տես, կէս օրուան մօտ
 Մէկ տաք քամի մը փըչեց,
 Մեր ծաղկանց տեսք շնորհք խամրեց¹
 Յետոյ կարկուտ և յորդ² անձրև,
 Լոյս ծաղկանց մուխ բերին արև,
 Ոմանց տեղերն ալ չը մնաց,
 Շատերն ընկան թոռմած դեղնած.
 Եւ այլք կախուած գըլխիվայր
 Կ'երերային խեղճարար:
 Իսկ մեր Շուշան՝ որ առաւօտ
 Մեծ վեժ խօսէր, յոխորտարար³,
 Զարդ բուրդ եղած, աղտոտ – կեղտոտ
 Ցեխերու մէջ քաշ կու գար:
 Այն ժամանակ Մանուշակ,
 Իր ցօղազարդ աչերով,
 Նայեցաւ մէյ մը չորս քով,
 Եւ ստեղծողին տալով փառք՝
 Սըրբեց աչքին ցօղ – արտասուք
 Հառաչելով խորունկ խորունկ:

Հ. Ք. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ (Առակք)

1. խամրել, թոռմել, թօշմել — 2. Յորդ, առատ — 3. Յախորտարար, դոռողարար:

Վ. Ա. Գ. Ր


Այս ահաւոր գազանին թիկունքը¹ դեղին է, փորը սպիտակ խառն սև շերտերով², պոչը երկայն է սև և դեղին մանեակներով³ ծածկուած:

Գազանաց մէջ ամենէն ահաւորն և վայրագն⁴ է: Կը գտնուի Ասիոյ և արևելեան Հնդկաստանի կողմերը: Կրնայ ընտանենալ և ճանչնալ իր տէրը:

Վագրը սաստիկ զօրաւոր է. գիշեր ատեն յանկարծ անապատ և վայրի⁵ դաշտաց մէջ բարձր տեղ մը ելած կատաղաբար կը գոչէ⁶. այս ձայնէն կը հնչեն անտառը և լեռինք. առիւծները, փիղերը և ուրիշ ահաւոր գազաններն իսկ կը սոսկան այս ձայնէն. թռչունները սարսափած ծառէ ծառ կը թռչըտին, և առհասարակ ամէն վայրի և ընտանի անասունները ահաբեկեալ⁷ կը թողուն իրենց որջերը⁸ և ուր երթալնին չեն գիտնար: Վագրը՝ այս գոչիւնը արձկեկէն վերջ, բարձր խոտերու մէջ կը ծածկուի և փորին վրայ սողալով շեշտակի⁹ որսին վրայ կը նետուի. եթէ փոքր է որսը, խալոյն զայն հոն կը յօշոտէ¹⁰ և կ'ուտէ, իսկ եթէ մեծ է, օրինակի համար, անհեթեթ¹¹ փիղ մը, կը սպաննէ և ոտքէն խածնելով կը քաշէ կը տանի իր որջը: Գետեզերքին մօտ կը ծածկուի՝ երբ գազանները կու գան ջուր խմելու, այն ատեն կատաղաբար կը յարձակի և կը բռնէ զանոնք: Այնքան վայրագ է որ ցորեկ ատեն շուկաներու մէջ կը մտնէ ու բոլոր անցորդները կը բզկտէ¹²:

1. Թիկունք, կռնակ. — 2. Շերտ, գիծ. — 3. Մամեակ, օղակ. — 4. Վայրագ, վայրենի, անզուխ. — 5. Վայրի, վայրենի. — 6. Գոչել, պոռալ, ճըւլ. — 7. Ահաբեկեալ, սարսափած. — 8. Որջ դազաններու բնակարան. — 9. Շեշտակի, շիփ շիտակ. — 10. Ծօշոտել, պատուակել. — 11. Ամհեթեթ, խոշոր, ալանգակ. — 12. Բզկտել, կտոր կտոր ընել:

Հիմա կը ջանան երկրիս վրայէն բոլորովին ջնջել այս գազանը, բայց որսորդութիւնը շատ դժուար ըլլալով, անկարելի կը համարուի անոր տեսակը ամբողջովին ջնջելը: Յաւալին այն է որ այս գազանը ոչ միայն աշ-



Վագր

խարհիս վայրենի կողմերը կը գտնուի, այլ և մեր կողմերը: Դուռնըֆոր իր ճամբորդութեան ատեն տեսած է վագրը Մասիս լեռան պատառուածներուն մէջ: Վ. Հ. Ալիշան Վ. Կ'ըսէ. «Այժմ Հայաստանի կողմերը առիւծ գրեթէ ամենևին չի գտնուիր, բայց վագր շատ»:

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ (Կենդանաբանուորիւն)

1. Ես ալ 1891ին դէպ ի Մուշ ճամբորդութեանս ժամանակ աչքովս տեսայ խնուս բերդաքաղաքին մէջ երկու վագրներու զեղեցիկ մորթները. նոյն օրը զարնուեր էին խնուսի դաշտին մէջ՝ ուր եկեր էին Մուշ դաշտէն հալածուած:

Ե. - Հ. Ա. ԳՈՆՏԱՔԾԵԱՆ

Ա Ր Զ Ը

Քեզի պատմելիքս մէկ տարի առաջ գաւառին պըզտիկ քաղաքի մը մէջ հանդիպեի է. նոյն պատմութիւնը այս իրիկուն լրագրի մը մէջ կարդացի, բայց ինծի այնպէս թուեցաւ թէ լրագրին պատմածը իրականութենէն հեռու է: Ուրեմն մտիկ ըրէ:

Մարդ մը կար՝ որ արջ խաղցնելով իր ապրուստը կը ճարէր. իրիկուն մը ճաշելու համար պանդոկ մը մտաւ ու կենդանին դուրսը, բակին մէջ, ախոռին մօտ կապեց: Խեղճ արջը, հակառակ իր վայրագ կերպարանքին, բնաւ մէկու մը վնաս չընէր:

Նոյն պահուն առաջին յարկին լայն պատշգամին վրայ, իմ լուսովս (լուսինն է պատմողը) երեք պզտիկ տղաք կը խաղային. ամենէն մեծը վեց տարեկան թեւրեւ, իսկ պզտիկները՝ երկերկու տարեկան:

Թ՛ըփ, Թ՛ըփ, մէկը սանդուխներէն վեր կ'ելլէ... ո՞վ կրնայ ըլլալ: Դուռը կը բացուի, ու արջը կ'երևնայ. անհեթեթ արջը՝ որ ձանձրացեր էր գաւթին մէջ մինակ կենալէն... Կապը քակեր էր ու, անխողով, վեր ելեր էր սանդուխին աստիճաններէն: Փոքրիկները՝ ահարեկեալ, պատշգամին անկիւնները փախան, բայց արջը երեքն ալ դուրս հանեց անկիւններէն, մազոտ դունջովը հոտուրտաց զանոնք, սակայն ամենևին վնաս մը չըրաւ:

— Անշուշտ խոշոր շուն մըն է, — բացազանչեցին տղաք, — ու սկսան իրենց պզտիկ ձեռքերով շոյել անոր կոնակը: Արջը գետին պառկեցաւ. տղոցմէ ամենէն պըզտիկը անոր չորս կողմը պարեց, վրան հեծաւ, իր պզտիկ գլուխը անոր սեւ և թաւ մազերուն մէջ խոթեց:

Մեծ տղան փող մ'առաւ ու սկսաւ փչել, այն ատեն
կենդանին ետեի ոտքերուն վրայ կանգնեցաւ ու սկսաւ
պարել: Իրաւցնէ ախորժելի էր տեսնել զինքը այն զբը-
բին մէջ: Տղաք առին իրենց պատիկ հրացանները, ու
մէկը արջին տուին՝ որ բաւական լաւ կը բռնէր:

Ո՛հ, շատ սիրուն խաղի ընկեր մը գտեր էին, ու կը



Արջը

պոռչրտային, մէկ, երկու. մէկ, երկու: Նոյն պահուն
տղոց մայրը դրան մէջ երկեցաւ: Ի՛նչ սարսափ: Պէտք
էր տեսնել անոր կերպարանքը. ձեան պէս ճերմակ
էր, աչքերը լայն բացած, բերանը բաց: Սակայն ամե-
նէն պատիկը դէպ ի մայրը վազեց ծափ ծափի զարնե-
լով և իր լեզուով խօսելով:

— Չինուոր կը խաղանք, մայրիկ:

Արջուն տէրն ալ նոյն միջոցին երկեցաւ պատշգամին
վրայ:

Յ. Ք. ԱՆՏԵՐՍԸՆ





Պահապան հրեշտակ

ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿ

Ի՞նչ ձայն է այն՝ զոր կը լրսեմ, մայր, յաճախ
 Սըրտիս խորէն, որ ինձ կ'ազդէ նաեւ վախ:
 Կը մըրմըռայ ցած երբ խելօք չեմ կենար,
 Ինձ ցաւ կու տայ, դէմքըս կ'ընէ կարմիր վառ
 Երբ մէկը զիս չի տեսներ,
 Երբոր դուն հոն չես և ոչ իսկ քու ըստուեր,
 Բայց երբ խելօք եմ, ինձ խրախոյս կը շընչէ
 Սյն ձայնն, ու ինձ կ'ըսէ ցած. Սյս ազէկ է:
 — Սյդ ձայնն, որդեակ, է պահապան հրեշտակիդ:

Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ ԵՒ ՈԼՈՌՆ՝ (Հէքլեամ)

Իշխան մը կար, որ կ'ուզէր ամուսնանալ իշխանուհի մը հետ. բայց բուն իշխանուհի մը կ'ուզէր կին առնուլ: Այդ իշխանուհին գտնելու համար աշխարհիս ամէն կողմը ճամբորդեց: Իշխանուհիներ շատ կային, բայց անոնց ճշմարիտ իշխանուհի ըլլալուն վրայ երբէք չէր կրնար ապահով ըլլալ, վասն զի միշտ անոնց վրայ կասկածելի բան մը կը նշմարէր: Ուստի իր փնտռածը չգտնելուն վրայ տխրած դարձաւ տունը:

Իրիկուն մը, ահաւոր օդ մը կ'ընէր, փայլակները յաճախակի կը լուսաւորէին, որոտմունք կը մոնչէին, անձրևը տեղատարափ կ'իջնար: Քաղաքին դուռը զարնուեցաւ, ու թագաւորը անմիջապէս գնաց բանալու:

Իշխանուհի մըն էր: Սակայն ո՛րչափ աղտոտած անձրևէն և հովէն: Ձուրը կը կաթէր զգեստներէն և մազերէն, կօշիկներուն մէջ խկ լեցուեր էր: Այսուհանդերձ կը հաստատէր անկեղծօրէն թէ իրացնէ իշխանուհի մըն է:

«Քիչ մը վերջ կը հասկնանք» ինք իրեն խորհրդածեց թագուհին, բայց անոր բան մը չըսաւ: Սենեակը գնաց, յարդէ անկողնոյն վրայ ոլոռն մը դրաւ, անոր վրայ քսան հատ անկողին, ապա քսան հատ ալ փետրալից անկողին դրաւ: Իշխանուհին այդ անկողնոյն մէջ պառկեցուցին:

Երկրորդ առաւօտը թագուհին հարցուց թէ զիշերը ինչպէս անցուցեր է:

«Շատ գէշ» պատասխանեց իշխանուհին: «Ամբողջ զիշերը աչքս չկրցայ գոցել: Ի՞նչ կար անկողնոյն մէջ:

կարծր բան մը կը զգայի, որ մարմնոյս ցաւ կը պատ-
ճառէր: Ինչ տանջանք»: Այս պատասխանէն հասկցան
որ իրաւցնէ իշխանուհի մըն է, քանի որ քսան անկող-
նոյ և քսան փետրալից անկողնոյ վրայէն զգացեր է
ուռոնի կարծրութիւնը: Միայն իշխանուհի մը կրնար
ունենալ այդչափ փափուկ մորթ:

Իշխանը՝ համոզուած անոր ճշմարիտ իշխանուհի մը
ըլլալուն, ամուսնացաւ հետը. ուռոնը դրաւ թանգարա-
նին մէջ՝ ուր պիտի գտնուի դեռ, եթէ չէ գողցուած:
Կ'ուզէ՞ք երթալ տեսնել:

Յ. Ք. ԱՆՏԷՐՍԸՆ՝¹

Մ Ա Ն Ո Ւ Կ Ը

Գեղածիծաղ՝ Մայիս ամսուն, բուրաստանի մը
մէջ, ամենէն գեղեցիկը և ամենէն փնտուռածը վարդի
կոկոնը չէ՞, որուն վրայ պարտիզպանը մեծ խնամքով
կը զուրգուրայ և զայն կը պատսպարէ միջատներէն ու
ցուրտէն:

— Դուն, ո՛վ մանուկ, ըլլաս աղքատի մը կամ հա-
րուստի մը զաւակ, մարդկային կեանքի պարտէզին մէջ
այդ սիրուած կոկոնն ես. պէտք չէ որ եղեամբ զքեզ
խամրեցնէ:

Երկնքի վրայ, գարնան առաւօտուն երբ աստղերը
կը մարին, ամենէն գեղեցիկը արեգակը չէ՞ երբ ըլլան
մը ծայրը, կամ հորիզոնին վրայ կ'արթննայ՝ կապոյտ
երկնքի վրայ իր շրջանն ընելու:

1. Յովհաննէս Քրիստիանոս Անտէրսըն 1805ին ծնած է Տանիմար-
քայի Օտէնս քաղաքը՝ մարդերով և ցորենով հարուստ Փրոնիա կղզւոյն
մէջ: — 2. Գեղածիծաղ, զուարթ:

— Գուն, ո՛վ մանուկ, ծնողքիդ համար այդ նորածին անուշ արևն ես. պէտք չէ որ ամպերը գան ու զքեզ իրենց աչքէն ծածկեն:



Մանուկը

Տեսած չե՞ս խաղաղ լճակ մը ծաղիկներով պսակուած. դէմքդ տեսած չե՞ս այդ մաքուր ջուրին մէջ:

— Ի՞նչ սիրտդ ու հոգիդ, ո՛վ մանուկ, մաքուր և վճիտ է այդ ջուրին պէս, պէտք չէ որ փոթորիկը գայ ու զայն պղտորէ:

Հ. ՄԿՐՏԻՉ ՊՈՏՈՒՐԵԱՆ

ՕՐՀԱՍԱԿԱՆ ՁԻՆՈՒՈՐԸ

Պ Ա Տ Կ Ե Ր

Օրհասական զինուորը, իր մանկատի¹ կնկան վարսերուն² գնդասեղը³ յիշատակ էր պահած իր քովը: Ջայն թաթղեց իր վէրքին արիւնին մէջ և մետաքսէ թաշկինակին վրայ զրեց:

— «Չորցաւ կեանքիս աղբիւրը. օրոցքէն հանէ մեր անդրանիկ փոքրիկը, սուրբ անկողնոյն առջև տոտիկնեւրուն⁴ վրայ պահ մը կայնեցուր, իմ հոգւոյս համար առաջին խաչակնքելը իրեն սորվեցուր»...:


Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

ԱՔԼՈՐ՝ ԵՒ ՄՍՐԳԱՐԻՏ


Կըռկըռացող Աքլոր ազբար
 Գըրքըրեւով ազբիւս⁶ վեր վար,
 Գըտաւ Մարգրիտ մը կըս — կըլոր,
 Շատ մեծագին⁷, շատ ալ աղուոր.
 Բայց եկ տեսնենք ինչ դատաստան
 կըտրէ խելօքն անոր վըրան:


«Տեսքը գէշ չէ, գոյնն ալ սիրուն,
 «Բայց չէ տըւած սոցա բնութիւն
 «Կըշտացնելու ալ զօրութիւն».

1. Մանկատի, երիտասարդ. — 2. վարս, մազ. — 3. Գնդասեղ, մէկ ծայրը դունդ սահլ. — 4. Տոտիկ, պտի ոտք. սպու ոտք. — 5. Աքլոր, աքաղաղ. — 6. Ալրիւս, կենդանիներու աղբ. — 7. Մեծագին, շատ սուղ.



Մայր և Քրիստոս





« Այս բաներուս փուճ և խարոզ՝
 « Միայն անխելք մարդիկ տան փող՝
 « Ինձի համար հատ մը կորեկ
 « Ասկէ շատ վեր ունի արժէք.
 « Տեսք ալ չունենայ,
 « Ուտելու կու գայ » : —
 ԱճԼՈՐԻՍ ԽԵԼՔԷՆ
 Մարդիկ պակաս չեն,
 Եթէ իրենց բան չեն արժեր,
 Ոչ գիտութիւնք, ոչ լեզուներ :

Հ. Ք. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ (Ասակք)

ՄԱՆԿԻԿՆ ՈՒ ԹՈՉՈՒՆ

ՄԱՆՈՒԿՆ

Փոքրիկ թրուչնակ, ինձ հետ եկուր,
 Տես ինչ սիրուն է իմ վանդակ
 Հոն ծաղիկներ կան քաղցրաբոյր,
 Հոն պրտուղներ կան անուշակ :

ԹՈՉՈՒՆ

Մանկիկ, կ'ապրիմ ես երջանիկ,
 Ազատ մընալ՝ այս իմ փափաք,
 Ինձ շատ սիրուն իմ խեղճ բունիկ
 Քան գեղեցիկ քու այդ վանդակ :

ՏԸՎՈՒԱԼ (Երգում. Հ. Ա. Ղազիկեան)

Մ Ր Ր Ի Կ Ը

Հանի¹, մամ, մայր և որդի միասին են մութ սե-
նեակին մէջ: Տղան կը խաղայ, մայրը կը զարդարուի,
մամը կը մանէ, հանին՝ բոլորովին ծռած, վառարա-
նին ետևը փետուրներու մէջ կը նստի: Ինչ ահաւոր օդ
կ'ընէ:

Տղան կ'ըսէ. — Վաղը տօն է: Ո՛րչափ կը փափա-
քիմ ցատկըռտել դաշտին մէջ ու բլուրներու վրայ. ինչ
գեղեցիկ ծաղիկներ պիտի ժողվեմ: Շատ կը սիրեմ
դաշտը: — Մտիկ ըրէք, ինչպէս կը գոռայ որոտումը:

Մայրը կ'ըսէ. — Վաղը տօն է. ամէնքնիս միասին
ուրախութիւն պիտի ընենք սեղանին շուրջը: Ես ալ իմ
տօնական զգեստներս պիտի հագուիմ: Կեանքն ալ՝ ձանձ-
րոյթներէ վերջ, ունի իր հաճոյքը, ու այն ատեն արևը
կը փայլի ոսկիի պէս: — Մտիկ ըրէք, ինչպէս կը գո-
ռայ որոտումը:

Մամը կ'ըսէ. — Վաղը տօն է: Մամիկին համար այլ
ևս տօն չկայ: Կերակուր կը պատրաստէ, կը մանէ՝
զգեստներ շինելու համար: Կեանքը բոլորովին աշխա-
տութիւն է և մտատանջութիւն, երանի՛ անոր որ իր
պարտքը կը կատարէ: — Մտիկ ըրէք, ինչպէս կը գո-
ռայ որոտումը:

Հանին կ'ըսէ. — Վաղը տօն է: Շատ կը փափաքէի
մեռնիլ վաղը: Այլ ևս չեմ կրնար ո՛չ երգել, ո՛չ կա-
տակ ընել, ո՛չ աշխատիլ և ո՛չ բանի մը վրայ մտածել:
Ինչ բանի կու գամ աշխարհիս վրայ: — Տեսէք կայ-
ծակը ինչպէս կ'իյնայ հոն:

Ո՛չ կը լսեն, ո՛չ կը տեսնեն: Սենեակը բոցերու մէջ

1. Համի, մամուն մայրը, մեծ մօր մայրը.

է: Հանի, մամ, մայր և որդի կայծակնահար եղեր են. հարուած մը վերջ կու տայ չորս կեանքերու: Ու վաղը տօն է:

ԿԻՒՍԿԱԻ ՇԸՎԱՊ (Իտալ. քարգմ. ֆարսուշիի)

ՓԱՌՔ ՏԱՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ

Հնայա, երթանք դաշտը, տեսնենք ինչպէս կը մեծնան ծաղիկները. մտիկ ընենք սա թռչուններուն ճիւղերը, խաղանք սա նոր բուսած խոտերուն վրայ:

Չմեռը անցեր է. ծառերը կը ծլին. դեղձին վարդեգոյն ծաղիկը կը բացուի, տերեւները կը կանանչնան, մշուշը բլուրներու վրայ, ձորերու մէջ կը փռուի, մանուշակը շուքի տակ կը պահուրտի ու անուշ հոտը կը ձգէ:

Հաւը իր հաւկիթներուն վրայ նստած՝ ժամէ ժամ կը սպասէ, թէ ե՞րբ պիտի գայ այն ատենը՝ որ կտուցովը հաւկիթին կճեպը կտորէ ու իր սիրուն ձագերը դուրս հանէ:

Նոր ծնած գառնուկները մարմանդին վրան են, հազիւ թէ կընան իրենց տկար ոտքերուն վրայ կենալ, ու մօրերնուն քով կը դողդղան: Սիրուն գառնուկներ, թէ որ դուր ընկնիք ալ՝ չէք ցաւիր, վասն զի գետինը փռուած է կակուղիկ կանաչ կապերտ մը:

Թիթեռնիկները թռչունին բացած արևուն ճիւղէ ճիւղ, ծաղկէ ծաղիկ կը թռչրտին:

Ամէն նոր ձագերն ալ երջանիկ են, ամէնն ալ ասդին անդին ցրուած կը խաղան, կը խնտան ու փառք կու տան Աստուծոյ որ իրենց կեանք տուաւ: Անոնք միայն սրտով կընան ճխալ, մենք սա բաղդն ալ ունինք որ բերնով ալ կ'օրհնենք զինքը:



Փարո տանը

Թուշունները կը ճըճըւան, գառնուկները կը մային, բայց մենք միայն կրնանք Աստուծոյ բարիքներուն վրայ խօսիլ: Ուրեմն փառք տանք ու օրհնենք զինքը ան արարածներուն բերնէն ալ՝ որոնք լեզու չունին:

Երազիւ ծառեր, պզտիկ գառնուկներ, թէ որ լեզու ունենայիք ո՞րչափ պիտի գովէիք Աստուծոյ բարութիւնը. բայց դուք լեզու չունիք, մենք ձեր տեղը կը խօսինք: Ամէն լերան վրայ, ու ամէն կանաչ գետնի երես՝ մենք ձեր տեղը շնորհակալ կ'ըլլանք:

ԱՆԻՇԱՆ (Յոյցք Աստուծոյ)

ԾՈՒԽԸ ԵՒ ԱՄՊԸ

Օր մը ծուխը՝ որ ծխնելոյզէ՝ մը կ'ելլէր ու դէպ ի վեր կը բարձրանար, հանդիպեցաւ ամպին՝ զոր հովը կը տարուբերէր¹, հպարտութեամբ հրամայեց որ իրեն ճամբայ տայ:

Ամպը, զարմացած այսպիսի յոխորտանքի մը վրայ, հարցուց թէ ո՞վ է. ու ծուխը պատասխանեց. — Ես ծուխն եմ, ծնունդ կրակին՝ որ եղբայր է արևու՝ որուն դուն իսկ արդիւնքն ես:

Այն ատեն ամպիկը պատասխան տուաւ այն գոռոզին. — Բայց քու դէմքդ շատ սև է այդչափ բարձր ծագում մ'ունեցողին համար. ուստի ներէ եթէ ըսեմ, թուի թէ աւելի ածուխի զաւակ ես դուն՝ քան թէ կրակի: Այսուհանդերձ, պարոն որդի կրակի և եղբորորդի արևու, այն ատեն քեզի պատիւ կ'ընեմ, երբ հօրդ նըմանիս:


1. Երևելոյզ, տ. օճախ. — 2. Տարուբերիլ, տանիլ բերել:

Այս առակը կը սորվեցնէ մեզի չպարծենալ մեր
երեւելի նախահայրերով քանի որ անոնց նման արժանիք
և առաքինութիւն չունինք:

ՊԵՏՐՈՍ ԹՈՒԱՐ

ԿԱՏՈՒՆ ԵՒ ՍՈՒՍԱԿ

Հանճար ու խելք մէկ ըստակ
Երբ բրնձութեան ընկնին տակ.
Կատուն ամառ ժամանակ



Կատուն

Յանտառն որսաց մէկ սոխակ,
Ու ճանկերով մէջըէն բրնձած
« Դուն շատ անուշ կ'երգես ասաց:
« Բանաստեղծներ քեզի, Սոխակ,
« Կու տան հազար մէկ գովասանք.
« Քեզի համար՝ անցեալ օր
« Վարպետ աղուէս կ'ասէր որ,
« Բոլոր հովիւք, հովուուհիք,
« Չայնէզ կը զգան մարելիք:
« Ես ալ պըզտի երգիչ չեմ.

« Մէկ մ'ալ երգէ որ տեսնեմ,
 « թէ այս զովեստ, այս համբաւ
 « Սո՛ւտ են արդեօք, թէ իրաւ.
 « թէ ձայնդ ըլլայ անուշ, խաղուն,
 « Կ'երդնում, խնայեմ քո արևուն¹ »:
 Բայց Սոխակին՝ սաստիկ վախէն
 Լեզուն կապուած էր արդէն:



Սոխակ

« Երգէ՛, հոգի, երգէ՛, սիրուն ».
 Նորէն կրկնեց նենգժոտ² կատուն:
 Իսկ անմեղ ձագն՝ երգել ո՛ւր տեղ,
 Ճիկ մը հազիւ հանեց մէկ հեղ³:
 « Ի՞նչ, ա՛յս ձայնով, ա՛յ աներես,
 Բոլոր անտառը մոգե՞ր ես ».
 Կանչեց զազանն անզգամ.
 « Գիտցիր որ ձայնդ է անհամ,
 Եկուր մէկ մ'ալ համդ տեսնամ »:

1. քո արևուն, քու կեանքիդ: — 2. Նենգժոտ, նենգաւոր, խորա-
 մտեկ: — 3. Մէկ ճեղ, մէկ անգամ:

Այս ըսելով ձագը պատռեց,
 Եւ փետուրներն՝ հովուն ցրբուեց:

Հ. Ք. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ (Աստղը)

ԱՄԷՆ ԲԱՆ ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ԱՏԵՂԾԻ:

Աստուած ինչպէս նրկարեր է ծաղիկներ.

Ուսկից գըտեր է գոյներ:

— Մերկ տեսնելով գետիններ

Ժրպտեր է նա և ծաղիկներն են բուսեր:

— Բայց ամէն բան նոյն մեծ Աստուածն է ստեղծեր:

— Ամէն, որդեակ, ինչ որ ծանօթ կան բաներ,

Հող, ջուր, օդ, հուր իրեն ձեռքէն են ելեր:

— Եւ ըզքեզ ալ ինքն է ստեղծեր, մայր.

— Ո՞վ, զի՞ս:

Այո՛. ինչո՞ւ կը զարմանաս և կ'ապշխս:

— Ո՛հ, պիտ' եղած ըլլայ իրեն շատ դրժուար

Ստեղծել քեզի պէս մի բարի անուշ մայր:

Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ (Նուէր մանկանց)

ԶՄԵՌՈՒՆ ԵՒ ԳՍՐՈՒՆԸ

Զմեռը կ'արհամարհէր զգարունը և կը նախատէր
 ըսելով թէ, երբ մէջտեղ կ'ելլէ ամէնուն խաղաղու-
 թիւնը կը վրդովէ, ոմանք մարգերու մէջ կ'երթան, ու
 բիշներ անտառներու մէջ կը թափառին¹, ոմանք ծաղիկ
 կը հաւաքեն, այլք իրենց գլուխը և մազերը շուշաննե-
 րով և վարդերով կը զարդարեն, ոմանք նաև կը մտնեն և

1. Թափառիլ. աստին անդին քալել:

իրենք զիրենք հովերուն կու տան. ամէնքը կը զգուշանան կամ յանկարծական հովէ կամ շարունակ անձրևներէ: «Իսկ ես ընդհակառակն» կ'ըսէր ձմեռը, «մեծ իշխանի մը կը նմանիմ, մեծ թագաւորի մը պէս եմ և կը բռնադատեմ զմարդիկ աչքերնին վեր չբարձրացնել, զլուխնին ծռել և դողալ, ու տուներէն դուրս չելլել»: «Ու բուն այդ բանին համար է», պատասխանեց զարունը, «որ ամէն մարդ քեզմէ ազատիլ կը փափազի: Իսկ ես զուարթ եմ միշտ, իմ հոտս անգամ ուրախութիւն կը ներշնչէ: Երբ հեռանամ՝ ամէնքը զիս կը փնտռեն, իսկ երբ դառնամ ամէնքը կը ճխան¹»:

Ն. ԹՈՄՍԱԷՆՅՈՅ

ՅԱՐԴԷ ՊՈԶԸ

Անգամ մը պզտիկ աղուէս մը, անփորձ և շատ որկրամուլ², ծուղակի³ մը մէջ կ'իյնայ՝ ուր կը թողու պոչին մեծ մասը: Այս դժբաղդութեան պատճառաւ սաստիկ վշտացած և ամօթահար, չէր համարձակեր ցեղակիցներուն մէջ երևնալ, առանձին և պահուրտած կը կենար տեղ մը՝ ուր ոչ ոք կը տեսնէր իր այդ խայտառակութիւնը: Սակայն չկրցաւ բոլորովին ծածկել զայն իր ցեղակիցներէն՝ որոնք, հասկնալով թէ նա, փոխանակ երկայն պոչին, պզտի կտոր մը միայն կը կրէ, զայթակղեցան: Ուստի բոլոր դրացիները նախ խորհուրդ ըրին և ընելիքնին որոշելէն վերջ, զնացին պզտի աղուէսին մօտ, ու քիչ մը յանդիմանելէն քիչ մը միութարելէն վերջ, այն մնացած պոչի կտորին վրայ յարդէ գեղեցիկ պոչ մը աւելցուցին, և բաժնուելնէն առաջ խոր-

1. Ժխալ, սաստիկ ուրախանալ. — 2. Որկրամուլ, շատակեր: —

3. Ծուղակ, որդայթ, տ. տուզար:

հուրդ տունն անոր որ երբէք կրակի մօտ չերթայ, ապա թէ ոչ կրակը կ'այրէ այդ կեղծ պոչը և զինքն ալ միասին: Սակայն, այդ խորհուրդը ծածուկ չմնաց. արքադ մը լսեր էր և պատմեր էր որուն որ պէտք էր: Ուստի այն ժամուն՝ յորում ազուէաները որսի կ'ելլեն, հոս հոն հաւնոցներու քով, կէս ծածկուած կրակներ կը տեսնուին՝ որոնք, կարծես, այն խեղճ պոչին կ'ըսէին. «Եթէ մօտենաս, կ'այրեմ զքեզ»: Ու մեր խեղճուկ ազուէսիկը՝ այս ամէն բանը կը տեսնէր, պոչին սիրուն համար, հաւնոցներէն հեռու կը քալէր, նեղութեամբ կ'ապրէր և միշտ կասկածի մէջ էր կրակի մը մէջ իյնալու:

Թէ որչափ տեսց այս տառապանքի վիճակը չի գիտցուիր, բայց կ'ըսուի թէ վերջապէս այն պոչովը կրակի մը մէջ ինկեր է ու բոլորովին այրեր ու մեռեր է:

Այս պատճառաւ, մարդու մը համար, որ յանցանք մը գործեր է և միշտ յայտնուելու վախի մէջ է, ու կը զգուշանայ ամենէն, կ'ըսուի թէ յարդէ պոչ ունի ու կը վախնայ թէ կը բռնկի:

Մենք ալ ազուէսին պէս չընենք: Եթէ պակասութիւն մ'ունինք, խոստովանինք և համբերութեամբ կըրենք անոր հետեանքները, վասն զի գէշութիւնը շատ անգամ պակասութիւն մը ծածկելուն մէջն է, քան բուն պակասութեան մէջ: Բայց ամենէն լաւն է չար չգործել և վախ չունենալ:

ԴԵՄԻՍՏՈՎԷՍ ԿՐՈՍԻ



ՊՈԶԱՏ ԱՂՈՒԷՍ

Աղուէս մը կար չընէ փախած վարպետորդի,
Մեծ հաւակեր, մեծ ջարդ տըւող նապաստակի:

Սա օր մ'ընկաւ գեղջկին ծուղակ,

Բայց ինչ արաւ, ինչ չարաւ,

Ծակ մը գըտաւ դուրս պըրծաւ.

Ետեք բաց խաղը խայտառակ,

Զի հոն ձըգեց պոչը գրաւ:

Բայց իր պակասը պարտըկելու

Օր մ'աղուխուց ժողովքին մէջ

Ըսկըսաւ ճառ մը խօսելու,

Թէ՛ «Պոչ ասածդ՝ անշահ, փըցին

« Զարդ մ'է կախուած՝ զատ առանձին.

« Միշտ կ'աղտոտի կը ցելոտի,

« Պէտք է կըտըրի ու վերցըրի »:

Այս խօսքին դէմ ելաւ մէկէն

Ունկընդրաց մէկը խընտալէն.

« Խօսքըդ մեղրով, բարեկամ,

« Ասաց, դարձուր ետեւըդ մէկ մը յատեան,

« Զի տեսնելով՝ կըտըրենք ըստոյգ դատաստան »:

Աղուէսը զայս լսելով՝

Մեծ մեծ ծիծաղով

Խընտալ ըսկըսան

Պոչատին վըրան:

Եւ նոյն հին կերպով

Պոչաւորք պոչով,

Պոչատն ամօթով՝

Տեղերնին դարձան:

Հ. Ք. ՔՈՒՇԵՆԲԻ (Ասակը)



որով

ՄԱՆԿԱՎԱՐԺԻՆ ԱԿՆԱՐԿ ՄԸ

Պատուհանէս դուրս կարկառած¹ կը դիտեմ
 խումբ մը տղայոց, որոնց խնամքն ինձ յանձնեմ են.
 Ճիշ ճըռուողիւն² դարձած մանկուները զուարթադէմ
 Հրապարակին վրայ կը սուրհան³ դէս ու դէն:
 Հեռու ուրախ խումբէն՝ անկիւն մը կը կզած,
 Ձեռքը ծնօտին, աչքերն հողին սևեռած⁴,
 Դալարութեանց մէջ զերդ⁵ նոճի մ'տըխրազգած⁶,
 Ձէր մասնակցեք կարպիս ժխորին⁷ ընկերաց:
 Հայլի մը ձեռքս՝ վար իջայ կամացուկ,
 Յանկարծ իրեն դէմքն իր աչքին տակ դըրի...
 Ընդոստ ցատքեց վեր՝ այն տեսքէն չարաշուք...
 Մատովըս ցոյց տալով իրեն՝ վրայ բերի.
 «Կ'ուզես ազնիւ՝ սըրտի մ'պատկեր՝ դէմքիդ վրայ,
 Գնա՛ նկերացդ հետ կանչուըռտէ և խաղա՛»:


Հ. Ա. ՏԻՐՈՅԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾ ԱՄԷՆ ՏԵՂ Է՛

Ըսէ՛ ինձի, տղաս. ուսկի՞ց կու գաս. նայիմ ի՞նչ
 բաներ տեսար:

— Մարմանդին վրայ կը պտըտէի. ոչխարները չորս
 դիւ պարարտ խոտերը կ'ուտէին, ու զով շուքի տակ
 կը պառկէին: Յորենը՝ հերկած արտերու մէջ բուսեք էր.

1. Կարկառած, դէպ ի դուրս երկնցած: — 2. Ճըռուողիւն, բարակ
 ձայն, թռչնոյ ձայն: — 3. Սուրհան, վազել: — 4. Սևեռած, աչքերը
 տնկած: — 5. Ձերդ, պէս: — 6. Տխրազգած, տխուր: — 7. Ժխոր,
 ազմուկ:



Աստուած





խաշխաշն ու հարսնուկը անոր մէջ խառնուեր էին. մարմանդները գեղեցկութեամբ զարդարուեր էին:

— Ուրիշ բան չտեսար, տղաս, ուրիշ բան ալ չսորվեցար. վասն զի ատոնցմէ վեր բաներ ալ կան. Աստուած ալ դաշտին մէջն էր, չտեսար զինքը:

— Խիտ խիտ անտառներու մէջ ժուռ եկայ. հովը ծառերու մէջէն կը շշնջէր. ժայռերուն գլխէն ջրվէժ մը կ'իջնէր անուշիկ խոխոջալով. սամոյրը՝ ծառէ ծառ կը ցատըրտէր կ'երթար. թռչուններն մէկ բերան անուշ եղանակ մը կ'երգէին:


— Թէ որ միայն ատ է լսածդ՝ դարձիր նորէն, տղաս. վասն զի ատոնցմէ մեծ բան կայ լսելու. Աստուած այն հովին, այն ջրին ձայնին մէջն էր, անոր ձայնը չլսեցիր:

— Տեսայ որ ծառերուն ետէն լուսինը արծըթէ կանթեղի մը պէս կ'ելլէր. աստղերն մէկիկ մէկիկ կ'ան. մէկ մ'ալ յանկարծ սև սև ամպեր երևցան, դէպ ի հարաւ սկսան երթալ. փայլակն երկինքը կը լուսաւորէր, կայծակը հեռըւանց որոտալով կ'իջնէր. ես լսեցի այն սարսափելի ձայնը, վախէս սիրտս փրթաւ:

— Միայն կայծակէն վախցար. փայլակէն աւելի վախնալու բան չունէիր. եթէ ատանկ է՝ նորէն դարձիր, տղաս, վասն զի ալ աւելի մեծ բաներ կան. Աստուած այն մըրկին մէջն էր, ինչպէս չիմացար:

Աստուած ամէն տեղ է, ամէն մեր լսած ձայնին մէջ, ամէն տեսածնուս մէջ, առանց անոր բան չկայ. պէտք է որ մեր մտքին մէջն ալ ըլլայ միշտ:

Ա.ԼԻՇԱՆ (Յոյք Աստուծոյ)



Շ Ո Ւ Ն

Հնուց ի վեր կը գտնուէր ընտանի շունը. վայրենի ժողովուրդներն իսկ շուն կը պահէին իրենց տուններուն մէջ: Գլուխը երկայն է, քիթը՝ բութ: Ունի 42 ատամունք¹. շնատամունք՝ շատ մեծ և զօրաւոր են: Բիրը բոլորածև է, լեզուն ողորկ և գծաւոր: Առաջակողմեան անդամները հինգ մատ ունին, յետակողմեանը՝ չորս: Բազմաթիւ են ընտանի շանց տեսակները՝ որոնք յատկութիւններով և արտաքին տեսքով կը տարբերին մէկմէկէ: Շատակեր է շունը, բայց քիչով ալ կը կշտանայ, ստամոքսը զօրաւոր է, մինչև անգամ ամենակարծր ոսկրը կը մարսէ: Շատ խելացի է և շատ հաւատարիմ իր տիրոջ: Ուժով է և կրնայ երկար ատեն արագութեամբ² վազել առանց ցաւ մը զգալու կամ վնասուելու. չի քրտնիր, փրփուրն՝ որ շատ վազելէն բերնէն կու գայ, քրտինքի տեղ կը փոխանակէ: Կենդանեաց մէջ ամենէն աւելի ասոր հոտառութիւնը զօրաւոր է, այսու կը գտնէ իր տէրը և որսը: Կ'ապրի 15-20 տարի: Ընդհանրապէս շունը աշխարհիս ամէն կողմը կը զբտնուի. Հայաստան ալ զուրկ չէ ընտիր և ընդել շանց տեսակներէ:

Հռչակաւոր բնապատումն Պիւֆոն այսպէս կը գրէ շան համար.

« Ի բաց առեալ շան վայելչածև գեղեցկութիւնը, եռանդուն բարքն, ուժն, արագութիւնը, ունի գերազանցական բարեմասնութիւնք³ որով զմարդ առ ինքն կը ձգէ և ինքզինքը կը սիրցնէ: Կրակոտ և վառվռուն,

1. Ատամունք, սկոաներ. — 2. Արագութիւն, շուտ ընկը. — 3. Բարեմասնութիւն, լաւ յատկութիւն.



История

միանգամայն վայրագ և արիւնասէր բնաւորութիւն մը՝
 գշունը քան զմիւս բոլոր կենդանիները անմերձենալի
 պիտի ընէր, բայց կը տեսնեմք որ կըթուլիւնը այս
 ամենայն ինչ ի բաց ձգել տուած է շան: Ինքզինքը
 բոլորովին նուիրած է իր տիրոջը՝ որուն առջև դրած է
 իր քաջասրտութիւնը և հանճարը: Կը սպասէ անոր հրա-
 մաններուն որ կատարէ, կը խորհրդակցի անոր հետ.
 կը հարցնէ և կ'աղաչէ: Փորձիկ ակնարկով մը կ'իմանայ
 իր տիրոջ կամքը: Առանց մարդու պէս մտաւորական
 կարողութիւն ունենալու, ունի զօրաւոր զգացողութիւն,
 և, ի վեր քան զայս, հաւատարմութիւն, հաստատուն
 սէր. անփառասէր է, անինքնասէր, աներկիւղ և ոչ
 վրիժառու: Բոլորովին եռանդ է, բոլորովին աշխոյժու-
 թիւն, բոլորովին հնազանդութիւն...»:

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ (Կենդանաբանութիւն)

ԸԼԼԱԼ ԵՒ ԵՐԵՒԱԼ

Վըրան ելլելով Եդուարդ անտին՝

Կ'ըսէր. «Հայրիկ, տես

Ո՛րչափ մեծ եմ ես»:

Ըսաւ հայրն իրեն՝ երբ իջաւ գետին.

«Կ'երևայիր մեծ,

Այո՛, բայց փոքր ես.

Պէտք է ըլլալ՝

Ոչ երևնալ:

Ապագային մէջ նայէ չի մոռնաս,

Մի՛ գրեզ մեծցըներ, մեծցիր թէ կըրնաս»:

Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ (Նուիր մանկանց)

ԹԻԹԵՌՆԻԿ ԵՒ ՄԵՂՈՒ

Եթէ աղէկ օդ ընէ,
 Մի փոփոխամիտ կ'ըսէր թիթեռնիկ,
 Աղէկ եթէ օդ ընէ,
 Կ'երթամ զուարճանալ ի մէջ դաշտերուն:
 — Ես, ըսաւ անոր իմաստուն մեղուն,
 Յառաջ տանելու կ'երթամ իմ գործիկ,
 Եթէ աղէկ օդ ընէ:

ՆՈՅՆ

ՊՕՂ ԵՒ ՎԻՐԳԻՆԵՍՅ ՓՈԽՍԳԱՐՁ ՍԷՐԸ

Հազար անգամ պատմեր է ինծի թէ, երբ աշխատութենէ կը դառնար և զՎիրգինէ մինակ կը գտնէր, կ'ըսէր անոր. «Երբ յոգնած կ'ըլլամ զքեզ տեսնելուս պէս յոգնութիւնս կ'անցնի: Երբ լերան վրայէն այս հովիտիս մէջ կը տեսնեմ զքեզ, վարդի մը կոկոնին կը նմանիս մեր պտղատու ծառերու մէջ տեղը: Երբ դէպ ի մեր ծնողաց տնակը կ'երթաս, դէպ իր ձագերը վազող կաքաւէն աւելի գեղեցիկ կ'երևնայ հասակդ, և աւելի թեթև ընթացքդ: Եթէ աներևոյթ ըլլաս ծառերուն մէջ, զքեզ գտնելու համար հարկ չկայ որ աչքովս տեսնեմ, վասն զի այնպիսի բան մը կը թողուս կանանչներուն վրայ՝ ուր կը նստիս, և օդոյ մէջ՝ ուսկից կ'անցնիս, զոր չեմ կրնար խօսքով բացատրել: Երբ քովդ մօտենամ, զիս կը յափշտակես բոլորովին: Աչքերուդ կապոյտն երկնից կապոյտէն աւելի գեղեցիկ է: Սիրուն

ձայնդ աւելի քաղցր է քան զգեղգեղն Պենկայիկներս: Եթէ մատիս ծայրովը միայն դպչիմ քեզի, խնդութենէս կը դողայ բոլոր մարմինս: Միտքդ բեր այն օրն երբ Երեք Ստեանց գետին մէջ զլորտկող սուր քարերու վըրայէն անցանք: Չարաչար յոգնած էի երբ գետեզերքը հասանք, բայց երբ կոնակս առի զքեզ, կարծես թռչնոյ թևեր ստացայ: Ըսէ ինձի, կ'աղաչեմ, ինչ բանով կախարդած ես զիս: Խելքովդ արդեօք, սակայն մեր մայրերը մեզմէ աւելի խելացի են. արդեօք զգուանընելովդ, բայց անոնք քեզմէ աւելի ստէպ կը համբուրեն զիս. — ես կարծեմ բարեսրտութիւնդ է զիս կախարդողը: Երբէք պիտի չմոռնամ մինչև Սև գետը բորիկ ոտքով քալելդ, խեղճ փախստական գերիի մը ներումը խնդրելու համար: Ա՛ռ, սիրելիդ իմ, կիտրոնի այս ծաղկած ճիւղը՝ զոր անտառէն փրցուցի, զիշերը անկողնոյդ քովը դիր. կե՛ր մեղրի այս խորխար՝ զոր քեզի համար ժայռի մը վըրայէն առի, բայց նախ հանգչէ զիրկս՝ որպէս զի յոգնածութիւնդ անցնի»:

Վիրգինի ալ կը պատասխանէր. «Եղբայր իմ, երբ արևու առաւօտեան ճառագայթները կը ցոլան այս ժայռերուն ետեւէն, այնչափ ուրախութիւն չեն պատճառեր ինձի, որչափ քու տեսութիւնդ: Իրաւ է կը սիրեմ մայրս, կը սիրեմ նաև քու մայրդ, բայց երբ «որդեակ իմ» կ'ըսեն քեզի, ա՛լ աւելի կը սիրեմ զիրենք: Աւելի կը զգամ երբ քու վրադ կը գուրգուրան քան երբ կը զրգուեն զիս: Էր հարցնես զիս սիրելուդ պատճառը, այն ամէն բաներն՝ որոնք միասին կը մեծնան, զիրար կը սիրեն. տես մեր թռչունները, մի և նոյն բոյներու մէջ կը մեծնան և մէկզմէկ կը սիրեն, մեզի նման: Մտիկ ըրէ՛, ինչպէս մէկզմէկ կը կանչեն ու կը խօսին մէկ ծառէ միւս ծառը: Այսպէս ես ալ, երբ լերան վըրայ կը հնչեցնես սրինգդ և արձագանգը ինձի կը հասնի, հո՛վիտին խորէն անոր խօսքերը կը կրկնեմ: Սիրելի ես

ինծի, մանաւանդ այն օրէն ի վեր, երբ, իմ պատճառաւ, ուղեցիր այն գերիին տիրոջ հետ զարնուիլ: Այն օրէն սկսեալ, շատ անգամ ինքիրենս խորհրդածեր եմ. Ո՛հ, եղբայրս բարի սիրտ մ'ունի, թէ նա չըլլար, վախէս մեռած կ'ըլլայի: Ամէն օր ազօթք կ'ընեմ իմ և քու մօրդ համար, քեզի և նաև մեր խեղճ ծառաներուն համար, բայց երբ քու անունդ կը յիշեմ, կարծես ջերմեռանդութիւնս կ'աւելնայ. եռանդեամբ կը խնդրեմ Աստուծմէ՛ որ չարիք մը չպատահի քեզի: Ինչո՞ւ այնչափ հեռու և բարձր տեղեր կ'ելլես ինծի համար պտուղ և ծաղիկներ քաղելու: Մեր պարտէզին մէջ գտնուածները բաւական չե՞ն: Տես, ինչպէս յոգներ ես, արիւնքրտինք մտեր են»:

ՊՕՂ, ԵՒ ՎԻՐԳԻՆԷ

ԳՐԱՃԱՐԱԿ՝ ՄՈՒԿԵՐՆ

Ամէն բանի դէտ² և հմուտ,
 Պատմաբան,
 Երկնից զաղտնեացն իսկ հետամուտ
 Ի մի բան
 Լիթրէածե³ մեծահանճար
 Մի գիտուն,
 Գիր կը գրէր, վանկ կ'որոճար⁴
 Օրն ի բուն:
 Կը սկսէր նա ի ծագ⁵ այգուն,
 Եւ՝ փութով՝

1. Գրաճարակ, գիրք ուտող, կրճող. — 2. Դէտ, գիտող. — 3. Լիթրէածե, Լիթրէի նման. — 4. Որոճար կամ Որոճիլ. կրկին ծամել, շարունակ մտածել. — 5. Ի ծագ այգուն. առտու կանուխ:

Մերթ զիշերն իսկ կալով անքուն
 Անվրդով,
 Շարժէր զրիչն և համարձակ,
 Անվրէպ՝
 Յանձնէր թղթին մի ճառ արձակ
 կամ մի վէպ.
 կամ մի փայլուն ոտանաւոր
 ներդաշնակ:
 կը զրէր նա, միշտ, ամէն օր,
 Շարունակ...:
 Սակայն հազիւ թէ, յոգնած խիստ
 նա կ'երթար
 Գտնել մի քիչ, առնուլ հանգիստ
 Ու դադար,
 Ահա իսկոյն ամենակեր
 Համակէծ՝¹
 Գային նիհար թէ գեր մուկեր
 ֆոքր ու մեծ,
 Գրասեղանին վրայ խայտալ²
 Ու՛ զուարթ՝
 Իւր բազմարժան ձեռագրոց տալ
 Մի մեծ ջարդ,
 Խածնել, կրծել ծակել անդուլ³
 Անխափան
 վէպ թէ քերթուած կեղտով⁴ զելուլ⁵
 Ամէն բան...:
 — Խեղճ գրագէտն, հինգ տասն անգամ
 Ի զուր տեղ
 Չայնս ամուր մի դարակի կամ
 Մի արկեղ

1. Համակէծ, ամէն բան կրճող. — 2. խայտալ, վխտալ, ուրախա-
 նալ. — 3. Անդուլ, անգազար. — 4. Կեղտ, աղտ. — 5. Զելուլ, լեցնել.

Մէջ ամփոփեց, փակեց ուժգին,
 Ու՛ վրան՝
 Ղաւ մ'հաստատեց, կազմ. թանկագին¹
 Մի դարան...
 Բայց ամէն հնարք սպառեցաւ
 Անօգուտ,
 Եւ վերջապէս ալ Ղաւ մ'եղաւ
 Խելամուտ²
 Թէ մուկիկներ (զրահարակ
 Ապարէն).
 Մեծ զիւրութեամբ արկղ ու դարակ
 Կը ծակեն,
 Եթէ նոցա մէջ, քով, կամ մօտ,
 Կամ դռնէն,
 Իրենց ճաշակին յարմար հոտ
 Քիչ մը առնեն...
 — Մեր զրագէտն որ խելք ունէր
 Եւ հանճար.
 Շփէր ճակատն և կ'որոնէր³
 Առ այս ճար,
 — Յանկարծ իւր միտքն սթափեցաւ,
 Եւ ժպտուն՝
 Ալ չը յիշեց յուզմունք ու ցաւ,
 Գնաց տուն,
 Եւ իւր մարտիր կաղամարին
 Մէջ խսկոյն
 Մեղանի հետ նա խաւարին
 Լեցուց թոյն...
 Եւ արդարև թշուառական
 Թշնամի՝

1. Թանկագին, մեծ գին ունեցող — 2. Խելամուտ, սեղեակ,
 հասկցող — 3. Որոնել, փնտռել.

Մուկերն երբոր ի ճաշ եկան,
 Մի առ մի
 կերան զարձեալ... այլ լուռ ու մունջ,
 Յիրուցան
 Պահրիկ մը յետոյ ինկան անշունչ.
 Ճայթեցան...:



Գուցէ ոմանք ըսեն — « այս սին
 վախճանի
 Չարածնի մուկերն էին,
 Արժանի »:
 — Ես կ'ըսեմ, Ո՛չ: — Մի գրագէտ
 Չըհոգար
 Մտնել աղտոտ մուկերու հետ
 Ի պայքար¹,
 Քանզի չըկայ՝ փուճ կամ ընտիր՝
 Մի հատոր
 Որմէ չկրճեն անխտիր
 Մի կտոր...:
 Իսկ հեղինակ մ'երբէք պէտք չէ
 Վատագոյն
 Գրիչ գործածէ, և կամ թրջէ
 Չայն ի թոյն: —
 Ա. ՓԱՆՈՍԵԱՆ (Անտիպ գործեր)



1. Պայքար, վեճ, կռիւ.

ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆ

Արևը մարը մտաւ. զիշերուան ցօղը գետնին երեսը կը թրջէ, օդը՝ որ ցերեկը չափէ դուրս տաք կ'ընէր՝ հիմա կը պաղըշակի:

Ծաղիկները իրենց խառուտիկ թերթերը կը գոցեն, գլուխնին կը ծոկն, իրենց կոթին վրայ կը կախուին:

Վառեակները իրենց մօրը թևին տակ կը քնանան: Թռչունները երգերնին դադրեցուցեր են, բոյներնին ծառերուն վրայ դրած՝ գլուխնին ալ թևիկներուն տակը առած կը հանգչին:

Չայն մը չեւեր այն փեթակէն՝ ուր մեղուները ժիր կը մտնէին ու կ'եւլէին: Իրենք ալ թողուցեր են իրենց աշխատութիւնը, ու ամէն մէկը իրեն ընկերին ըով մոմէ սենեկաց մէջ կը քնանայ:

Ոչխարները իրենց կակուղ բրդին վրայ պառկեր են, ալ չի լսուիր բլուրներու վրայ անոնց մայելը:

Տղաքն ալ մոոցեր են իրենց խաղը, ամեննին ոտքի ձայն չկայ. ճամբաները մարդ չկայ. դարբինն ալ չի զարնէր իր կռանը սալին վրայ:

Հրւան սղոցը ճուլթոց մ'ալ չի հաներ. ամէն արարած կը քնանայ, մարդիկ ալ, անբանք ալ:

Երկինքն ու երկիրը մութը պատեր է. զիշեր...:

Ո՛վ է որ աս ամէն քնացողներուն վրայ հոգ կը տանի, ու անոնց չկրցած ատենը զիրենք կը պաշտպանէ:

Կայ աչք մը որ քնանալ չունի, որ առանց արևու լուսոյ կը տեսնէ. ճամբու մէջ անոր լուսին պէտք չէ, տան մէջ կանթեղի կարօտ չէ. երկնքի վրայ աստղ չի փնտռեր: Աս աչքը ամէն տեղ կը տեսնէ, ամէն մարդ կը հոգայ, աս է Աստուծոյ աչքը, որուն ձեռքը միշտ մեր վրայ է:



Փա՛նք Նախախնամութեամբ

Աստուած տուեր է քունը որ յոգնութիւն անունը, գիշերը մեզի տուեր է որ հանգչինք:

Իրիկունը մայրը մաաը բերնին դրած՝ կամաց կամաց քալելով չորս դին կ'երթայ ամէն շշնկոց դադրեցնելու, որ չըլլայ թէ իր տղան անուշ քունէն արթննայ. անկողնոյն վարագոյրը կը քաշէ, ճրագն ալ կը վերցնէ որ աչքին լոյս չգարնէ:

Աստուած ալ ասանկ մեզի համար սև վարագոյր մը կը քաշէ, ամէն բան կը խաղաղցնէ, որ իր մեծ ընտանիքը հանդարտ քուն ըլլայ:

Հանգիստ քուն եղէք յոգնած աշխատողներ, պզտիկ տղայք, դուք ալ տգորգացող միջատներ. Աստուած ձեր վրայ արթուն կեցեր է. իր աչքը միշտ բաց է՝ զձեզ պաշտպանելու համար: Երբոր մութը քաշուի ու արևուն ճառագայթները աչուընուդ գարնեն՝ շնորհակալ եղէք Աստուծոյ որ գիշերը զձեզ պահպանեց: Ծաղիկները բուրեն Աստուծոյ իրենց անուշ հոտը, թռչունները իրենց ընկերը չկանչած՝ անոր շնորհակալութիւն երգեն: Աստուծոյ անունը սրտին մէջ դրած՝ պառկի մարդն ալ ու ելած ատենը նորէն սկսի փառք տալ:

Ա.ԻՇԱՆ (Յոյցք Աստուծոյ)



Պ Ա Յ Ծ Ա Ռ Ա Ս Տ Ղ Ե Ր


Պայծառ աստղեր,
 Կը ծիծաղիր,
 Եւ չէք գիտեր
 Այս իմ վիշտերըս զաղտնի
 Այս արցունքներս իմ աղի...
 Այն ձերին խաղաղութեան
 Կոր ծովուն մէջ
 Արդեօք սըողուած¹ բազիններ² են
 Որոնց վըրայ վառ կը փայլիք
 Միշտ շէն զըւարթ
 Միշտ անգիտակ
 Մոմերն ինչպէս խորանի վըրայ...

ՎԻԿ. ԱՂԱՆՈՒՐ (Թարգմ. Հ. Արխտ. Քասկանտիչեան)


Մ Ա Յ Ր Ի Կ Ի Ն Ե Ր Գ Ը

Սիրեմ ցօղին շիթեր³ բարդ
 Եւ զեփիւռիկն առտըւան.
 Սիրեմ վարդէ ամպին վրան
 Տեսնել ծագել օր զըւարթ:
 Բայց զոր սիրեմ կաթոզին⁴,
 Երջանկութեամբ, հաւատով,
 Սուրբ և քաղցրիկ զորովով,

1. Սըողուած, ծածկուած, քօղարկուած: — 2. Բազին. տանարի,
 կուռքի սեղան: — 3. Շիթ, կաթիլ: — 4. Կաթոզին, շատ կարօտով,
 աստիկ փափաքով:



Գեորգու սկիզբն Ռուս



(Մազովսկի նկար)

Դու ես, որդեակ իմ:
 Սիրեմ զիշեր մըթագին¹
 Որ պըսակէ իւր վեհ գեղ²
 Ակունքներով իւր թագին,
 Լուսաւորել ամէն տեղ,
 Բայց զոր սիրեմ կաթոգին,

Դու ես, որդեակ իմ:
 Սիրեմ տեանել ովկիան
 Կատողած վազել ղէպ յերկին,
 Եւ հետեել լըռելեայն
 Մարգին գողտրիկ³ առուակին,
 Բայց զոր սիրեմ կաթոգին,
 Երջանկութեամբ, հաւատով,
 Սուրբ և քաղցրիկ գորովով,

Դու ես, որդեակ իմ:
 Սիրեմ Հաստչին տուրքն անհուն,
 Զըւարթ ժըպիտը զարնան,
 Մաղկած ամառն ու աշուն
 Եւ սառոյցները ձըմբան:
 Բայց զոր սիրեմ կաթոգին,
 Երջանկութեամբ, հաւատով,
 Սուրբ և քաղցրիկ գորովով,

Դու ես, որդեակ իմ:

ԼՈՒԻ ՌԱՏԻԶՊՈՆ (Թարգմ. Հ. Ա. Ղազիկեան)



1. Մթագին, մութ. — 2. Գեղ, դեղեցկութիւն. — 3. Գողտրիկ, փափուկ, անուշ, սիրուն:


Կ ՈՒՆ Կ Ա Ջ ՈՒ Կ Ն

Անհեթեթ¹ մեծութեամբ կոնկաձուկ² մը Բիավէի³ օրընթաց ջուրերուն մէջ կը լողար, սակայն, երկու եզերքներուն՝ որոնք աստի և անտի կ'արգիլէին գետին ջուրերը, սահմանը շատ նեղ կը թուէր իրեն, ու ինքը, իր մեծ հոգին գոհացնելու համար, կը խորհէր աւելի ընդարձակ ասպարէզ⁴ մը գտնել իր որսորդութիւնները կատարելու համար: Ի մեծ դժբաղդութիւն իր անձին, օր մը ջուրերը յորդեցին, վասն զի հով մը ծովէն ետ կը մղէր գանոնը: Լողալով ծովէն դէպ ի վեր ելաւ գլխաձուկ մը: Սա, հանդիպելով կոնկաձուկին, պատմեց անոր ծովու հրաշալիքները, և թէ որչափ լայն է և յարմար առատ որս ընելու: Կոնկաձուկը՝ այնպիսի ընդարձակ տեղոյ մէջ որս ընելու յուսով հրապուրուած, ու արհամարհելով իր հին բնակարանը, լողաց դէպ ի նաւահանգիստ: Բայց հագիւ հասեր էր հոն, կեանքը վրայ տուաւ, վասն զի իրմէ աւելի խոշոր և աւելի զօրաւոր ձուկի մը հանդիպեցաւ՝ որ զինքը անհամար և հատու աղաններուն տակ առնելով համեղ պատառ մ'ըրաւ:

Գ. ԿՈՒՄԻ



1. Առհեթեթ, շատ խոշոր և այլանդակ: — 2. Կոնկաձուկ, կոռնկի ձկն ունեցող խոշոր ձուկ մը: — 3. Բիավէ, Խտալիոյ մէջ մեծ գետ մը: — 4. Ասպարէզ, ընդարձակ տեղ, ա. մէյտամ:



Կրկնափակ

ՊԱՐՏԻՉՊԱՆԸ ԵՒ ՈՐՍՈՐԳԸ

Պարտիզպան մը ամէն ջանք կ'ընէր ու չէր յաջողեր ազատել իր կաղամբները¹, վասն զի որչափ կը բուսնէին՝ անիծեալ նապաստակ մը կ'ուտէր բուսածները. ուստի իր զրացի որսորդին դիմեց որ գայ և որսայ նապաստակը: Որսորդը խոստացաւ: Օր մը շուներովը եկաւ: Շուները, զրգռուած ընդդէմ նապաստակին, հալածեցին զայն տակնուվրայ ընելով պարտէզը, և մէկ ժամուան մէջ աւելի փնաս հասցուցին քան որչափ փնաս չէր կրնար ընել նապաստակը մէկ տարուան մէջ: Վերջապէս նապաստակը կը փախչի. որսորդը իր վարձքը կը պահանջէ և խորհուրդ կու տայ պարտիզպանին մացառներու ծակ տեղերը գոցել, որպէս զի նապաստակը նորէն պարտէզ չկարենայ մտնել:

Ֆ. Տ. ԿՈՒԷՐԱՅԻ

ՇԱՏ ԵՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԳՈՐԾԵՐԸ

Ափով մը աւազ ան ու համրէ. նայիմ կրնան դաշտին խոտերը, ծառերուն տերևները համրել: Իրաւ որ անոնք համրանքի չեն գար, բայց Աստուծոյ գործերը ալ աւելի շատ են: Եղևնին բարձր լեռներու վրայ կը բուսնի. ուռենին վազուկ ջրերու վրայ կը ծռի:

Կանկառը սուր սուր փուշերով պատած է. մոլոշը բրդոտ ու կակուղիկ է: Լուբիասը կը տարածուի ու կը պլլուի. կաղնին խոր արմատ կը ձգէ ու ձմեռուան հովերուն դէմ կը դնէ. մարգարիտ ծաղիկը դաշտերը կը

1. Կաղամբ, քարամ. տ. լամամայ:



Nymphaea glauca

զարդարէ, լեռներու փէշերուն տակը կը բուսնի. կա-
կաջը պարարտ հող ու հողացող ձեռք մը կ'ուզէ:

Հիրիկն ու եղեգը մէկմէկու կը պլլուին. կակուղ
խոտը մարմանդի մէջ կը բուսնի, փշոտ թուփերը՝ չքա-
նած երկիրներ: Զրային շուշանը գետին մէջ կը մեծնայ,
իր լայն ծաղկները ջրին երեսը կը բացուին. շահոքրամը
չոր քարի վրայ կը բուսնի ու իր հոտը ժայռերու մէջ
կը սփռէ:

Ամէն տերև մէկմէկ ձև ունին, ամէն բոյս մէկմէկ
կերպ բնութիւն: Տե՛ս ան խոտերը որ դաշտի մէջ կը
մեծնան, ան խոտերն ալ՝ որ նեղ ճամբաներու մէջ ոտքի
տակ կ'երթան. զանոնք մարդ չէ սերմանած: Կան բոյ-
սեր որ բարձր ժայռերու վրայ կը բուսնին, ուր որ
մարդ չէ ելած, կան որ խոր անտառներու կամ ան-
մարդի կղզիներու մէջ, ու ամէն տեղ:

Աստուած է որ հունտերը ասդիս անդին կը ցանէ.
անոնց մէկմէկ ձև կու տայ. անձրևով կ'ոռոզէ, ցօղով
կը մեծցնէ. ինքն է որ անոնց սիրուն գոյներ կու տայ
և տեսք, անուշ հոտ մը ու թափանցիկ բարակ թեր-
թեր՝ որ մարդս կը զարմացնեն:

Ի՞նչպէս կ'ըլլայ որ այն սև հողէն՝ վարդը իր ծի-
րանի գոյնը կ'առնու, շուշանը իր բեհեզը. ի՞նչպէս
կ'ըլլայ որ պզտիկ հունտը մեծ ծառ կը բուսցընէ. ին-
չէ՞ն զիտեն բոյսերը իրենց գալու ժամանակը, իրենց
կարգը ու իրենց տեղը:

Զիւնը իջնալէն վերջը եզնագին զլուխը հողէն դուրս
կը հանէ, ու զարունը հասնելուն՝ ահա ես ալ եկեր եմ,
կ'ըսէ:

Կան ծաղիկներ որ ամառուան արևը կ'ուզեն, դափ-
նին ձմեռուան ախրութիւնը կը զարդարէ: Ամէն բոյս կը
բերէ իրեն նման բոյսեր. ցորենին հասկը կորիզէ առաջ
չի գար: Խնձորին կուտը չի կրնար կեռաս հասցնել:

Զիւնը երկրիս երեսը ծածկած. սառը բոյսերը պա-

տած ատենը՝ Աստուած կը հոգայ որ չըջորնան: Ծառերը կը ցամփին, կը թափթրփին, կարծես թէ միայն սսկորնին կը մնայ. Աստուած զարնան շունչը կը փչէ անոնց վրայ, մէկ մ'ալ տերեւներ կը հագնին, կը սկսին ողջննալ:

Բոյսերուն պահուիլը Աստուծոյ հրաշալի գործերուն մէկն է. երբոր ամէն բան զԱստուած կը քարոզէ՝ պէտք է որ ես խօսիմ, ամէն դաշտ մէկ բացուած զիրք մըն է, ամէն ծաղիկ մէկ գրած դաս մը:

Առուակը որ կը խոխոջայ՝ ձայն մը ու լեզու մ'ունի. ամէն արարածները կը պատմեն իրենց ստեղծողը ու փառք կու տան անոր: Չենք կրնար զԱստուած տեսնել, վասն զի աչքի տակ չընկնիր. բայց իր գործերը տեսնելով՝ զինքը կը պաշտենք:

Որչափ որ մէկուն խելքը բաց է՝ այնչափ աւելի պարտական է զԱստուած օրհնելու. բայց ո՞վ կրնայ Աստուծոյ գործերուն թիւը և չափը գիտնալ:

Հ. Ղ. Ա.ԼԻՇԱՆ (Յոյցք Աստուծոյ)

ԾՆՆԻԵԱՆ ԹՈՉՈՒՆՆԵՐԸ

Կը դողայ ցուրտ յարզին վըրայ
Սիրուն փոքրիկն Յիսուս մանուկ.
Եւ զի մըսրին մէջ նա աաքնայ՝
Կը փըչեն վրան եզն ու իշուկ:
(ԹՆՈՅՈՂ ԿՕԴԻԷ)

Մանկիկն Յիսուս խիստ աղքատ էր
Իր մըսուրին մէջ ու գոմին:
Բարակահիւս¹ չունէր գորգեր²...
Մանկիկն Յիսուս խիստ աղքատ էր,

1. Բարակահիւս, բարակ հիւսուած: — 2. Գորգ, կապերտ, տ. խալի:

Թողած թարմ¹ խոտն՝ իրենց շունչեր
 Եղն ու իշուկ վրան կը փչէին.
 Մանկիկն Յիսուս խիստ աղքատ էր
 Իր մըսուրին մէջ ու գոմին:



Մանկիկն Յիսուս իր մսուրին մէջ

Պատին վըրայ, խեղճ վարագոյր,
 Սարղն իր ոստայնը կը ձըգէր,
 Կը կաթկըթէր բոլոր ձիւն, ջուր,
 Պատին վըրայ, խեղճ վարագոյր:
 Եւ այս պալատն էր ոսկեթոյր²,
 Աստուծոյն, որ ցանեց աստղեր...
 Պատին վըրայ, խեղճ վարագոյր,
 Սարղն իր ոստայնը կը ձըգէր:
 Չըկար փըղոսկը, ոչ կահ³ պայծառ,

1. Թարմ, հոր. ա. Թաժա. — 2. Ոսկեթոյր, ոսկիի գունով. —
 3. Կահ, կահկարասիք:

Միայն բաղեղն¹ էր տանը զարդ,
 Ջրկար ժանեակ², չրկար զոհար,
 Ջրկար փրղոսկր, ոչ կահ պայծառ
 Եւ ոչ իսկ մէկ խաղալիկ կար
 Որ լացող տղան ընէր զըւարթ...



Մամուկ Յիսուսի նզիպտոս փախուստը

Ջրկար փրղոսկր, ոչ կահ պայծառ,
 Միայն բաղեղն էր տանը զարդ:
 Սուրբ Յովսէփ խաչ մ'անոր շինեց,
 Դրղըր³ փայտէ փոքրիկ խաչ մի.
 Որ ըզբօսնու այն արքայն մեծ՝
 Սուրբ Յովսէփ խաչ մ'անոր շինեց.
 Բայց խաչն այն հինգ անգամ կամ վեց
 Լացուց մայրիկն ըսքանչելի...:

1. բաղեղ. ա. սարմաշըր: — 2. ժամեակ, թանթեւ: — 3. Դղըր, ծառի մը անուն.

Մուրբ Յովսէփ խաչ մ'անոր շինեց
Կըղբի փայտէ փոքրիկ խաչ մի:

Մօտ որրոցին մանկան ընճուշ¹
Երեք թըռչնիկ զըւարթ երգով
Տատրակ, սարեակ, խայտիտ աշխուժ,
Մօտ որրոցին մանկան ընճուշ՝
Եկան իրենց երգերն անուշ
Երգել հովուաց, մոգերուն քով,
Մօտ որրոցին մանկան ընճուշ
Երիք թըռչնիկ զըւարթ երգով:

Մութ որմերով² ախոռին մէջ
Կը նուագէին իբր յանտառակ,
Որ զուարթանայ այն արքայն մեծ
Մութ որմերով ախոռին մէջ.
Եւ սուրբ Յովսէփ անոնց շինեց
Երեքին ալ մէկ մէկ վանդակ,
Մութ որմերով ախոռին մէջ
Նըւագէին իբր յանտառակ:

Մանկիկն Աստուած երբ աքսոր գնաց
Եզրպտացւոց երկիրը տաք,
Հոն էր խըմբեակն³ այն երգասաց⁴
Մանկիկն Աստուած երբ աքսոր գնաց,
Ու կ'երգէին ձայնով կամաց
Եւքալիբդի⁵ ճիւղի մը տակ,
Մանկիկն Աստուած երբ աքսոր գնաց
Եզրպտացւոց երկիրը տաք:

Երբոր Յիսուս տեսաւ այն հող՝
Ուր ինք ծընաւ, այն հող սիրուն,
Թըռան եկան թռչունքն երգող

1. Բնքուշ, սիրուն, փափուկ. — 2. Որմ, դատ. — 3. Խմբեակ, պղտի խումբ. — 4. Երգասաց, երգող, երգ ըսող. — 5. Եւքալիբդոս, Աւստրալիայ գեղեցիկ և մեծ ծառ մը:



Երբոր Յիսուս տեսաւ այն հող.
 Մըրմընջէին ու փոխն ի փոխ
 Կեցած թըփին մէջ վարդենւոյն,
 Երբոր Յիսուս տեսաւ այն հող
 Ուր ինք ծընաւ, այն հող սիրուն:
 Ի Թարոր, մօտ Յորդանանու,
 Ի Գալիլեա, ի Սամարեա,
 Պարտէզին մէջ, տակ ձիթենւոյն,
 Ի Թարոր, մօտ Յորդանանու
 Գային երեքն այն երգելու
 Զորդին Երկնից և Մարեմայ,
 Ի Թարոր, մօտ Յորդանանու
 Ի Գալիլեա, ի Սամարեա:
 Կափառնաւում երգեցին նախ¹

Երկիրք երկնից Յիսուս մանկան.
 Ի Թարոր վարդըն վառ չըքնաղ,
 Եղանակով զեղածիծաղ.
 Այսօր իջեալ, Մայր Հաւատոյ
 Յետ խորհըրդոյ Հաղորդութեան.
 Կափառնաւում երգեցին նախ
 Երկիրք երկնից Յիսուս մանկան:
 Խաչափայտին ծառին քովիկ
 Երգերն անոնց դեռ կը լըսուին.
 Կ'ըսեն թէ այն երեք թըռչնիկ
 Մեռան խաչին ծառին քովիկ.
 Ծնընդեան կ'լըսուի իրենց ձայնիկ
 Արշալոյսի պատարագին.
 Սեղանոյն մօտ, խաչին քովիկ
 Երգերն անոնց դեռ կը լըսուին:

Հ. ՏՐԱՄԱՐՈՐԻ (Թարգմ. Հ. Ա. Ղազիկեան)

1. Այս տունը շանացիք յարմարցնել մեր երգերուն՝ վերցնելով լատինականները:

Ա.Զ.Գ.Ա.ՍԻՐՈՒԹԻՒՆ

Մարդ երբ կը ծնանի, կը ծնանի ընկերութեան մէջ,
կը մնայ ընկերութեան մէջ, անկէջ իր վրայ պարտք մը



մոգիտչու վրտարտուտ

կու գայ իր ընկերները սիրելու. այս պարտքը իր վրայ
կը դնէ բնական, քաղաքական, և աստուածային օրէնքը:
Բայց սէրը կարգ ունի, մարդը պարտական է սիրել

նախ իր ծնողքը, իր մերձաւորը, ապա հեռաւորները, և ինչպէս պարտական է ամէն բանէ առաջ և աւելի իր ծնողքը սիրելու, նոյնպէս պարտական է սիրելու իր ազգը կամ հայրենիքը՝ որ իր ամենէն աւելի մեծ ծընողըն է:


Ուր է ազգասիրութիւն, հոն են այն ամէն առաքիւնութիւն, այն ամէն ազէկութիւն, որ ընկերութեան մը հարկաւոր են: Շատ ազէկ բան է խաղաղութիւնը, արդ, եթէ ճշմարիտ ազգասիրութիւն կայ, այն ազգը, այն ժողովուրդը խաղաղ կը մնայ: Սքանչելի է արդարութիւնը, եթէ տեղ մը ազգասիրութիւն կայ, հոն կայ նաև արդարութիւն: Ազէկ բան է սրտցաւութիւնը, ազգասէրը ամենուն վրայ կը կարեկցի: Պատուական բան է ազգատուութիւնը. ազգասիրութեան մէջն է անիկայ: Շատ պատուական է մեծագործութիւնը. ազգասէր պէտք է ըլլայ ով որ մեծագործ բան մը կ'ընէ իր ազգին համար:

Ասանկ իմացի՛ր այն ամէն ազէկութեանց նկատմամբ՝ որոնք ընկերութիւնը կը շինցեն:

Որովհետև հայրենասէր ազգն է որ շատ առաջ կու գայ, անոր համար հայրենասէր անհատ մը աւելի մեծ պիտի սեպուի քան գանձ մը, վասն զի այն հայրենասէր կամ ազգասէր անձը, եթէ մեծ է, տկարներուն կ'օգնէ, առաջ կը քաշէ: Եթէ առողջ է՝ հիւանդներուն կը հասնի: Եթէ ունևոր է՝ չունևորներուն կ'ողորմի: Եթէ մէկին փորձանք մը հասեր է, կը կարեկցի, կը մխիթարէ: Եթէ մէկին վնաս մը հասեր է, ձեռքէն եկածին չափ կ'աշխատի, և այն վնասէն կ'ազատէ:

Ախ, ինչ ազէկութիւն ունի ազգասիրութիւնը՝ որուն մէջն է եղբայրսիրութիւնը, եղբայրսիրութեան մէջն է աստուածսիրութիւնը, աստուածսիրութեան մէջն է յաւիտենական կեանքը ու արքայութիւնը՝ որ է մեր վերջին վախճանը:





Հ Ա Յ Ո Յ Ա Շ Խ Ա Ր Հ Ի Կ

Հայոց աշխարհիկ, գարունդ է հասել
 Ահա գեղեցիկ գարունը քո եկել.
 Մ՛վ դու ի վաղուց¹ մոոցուած հայրենիք,
 Մ՛վ դու իմ սըրտին անմոռաց տեղիք.
 Ահա գարունիկդ հասել է հասել,
 Աւագ Մասեաց ծայրն ընդ քեզ հաշտ հայել.
 Այն սև սև ամպերն են դարձել ի փախ²,
 Այն ճերմակ ճերմակ սարերն³ են անվախ.
 Ջընիկն ի ծոցին բացեր է ճանապարհ,
 Քաղցրիկ կըրկըջով զլորէ գետս հազար.
 Յայն բարձրը ժայռից որ երկնուց են մօտ
 կենաց օրհնութեան ծագէ առաւօտ:
 Ահա քո բլուրներն՝ Հայոց աշխարհիկ,
 Այն քո բիւր բլուրներ ու բիւր վըտակիկը
 Հազար քո ձորերդ ու հազար քո դաշտ՝
 Տարան⁴ ցուրտ ձմեռդ ու ձիւներդ շատ.
 Լերինք և հովիտք ընդարձակ ու լայն
 Նախշուն⁵ զարդարին նոր հարսին նըման.
 Կապուտակ սարերդ գունըզգուն պըսակ
 կապեն ի զըլուխ զինչ նոր թագւորակ.
 Ի ծայրից սարից որ երկնուց են մօտ՝
 Փըռուի մինչ ի խորն հօրոտն ու մօրոտ⁶.
 Գետեզերք ամէն բացել են շուշան
 Պայծառ ղընդըղնով⁷ ցընցըղկեն զընան.
 Սարեզերքն ամէն զվարդն երևցուցին,

1. Ի վաղուց, շատուց. — 2. Դարձել ի փախ, փախելի. — 3. Սար, լեռ. — 4. Տարամ, քաղցիկ, կրկիկ. — 5. Նախշուն, դրոշմազարդ. — 6. հօրոտ ու մօրոտ, լեռնային ծաղկիկներ. — 7. Դըմզըղմով, ալիքներով.

Ահ կարմրուկ վարդեր, զաւակը Եղեմին։
 Պըլլաուլն ի հեռուանց թողեց ճըզնարան
 Ծովեր ցամբըններ թեկեց¹ անգուման²,
 Կանչեց ի յողուն երեք հետ³ բարև
 Ոտկունըն դըրաւ ի սարին վերև,
 Սարին վերեւն ի վարդին տերև,
 Հայոց աշխարհիկ, քեզ երեւ⁴ բարև.
 Սարեկն ի սարին եկաց ու մնաց,
 Անմեղ նախընծով եղաւ երգասաց.
 Արագիւն յերդիսն աւեց իր բունիկ,
 Կանգնեցաւ կըզաց՝ «Հայոց աշխարհիկ».
 Արտուտիկն թռաւ, թռաւ թռաւ վարուկեր
 Մանրիկ ճըլըլըլով ասաց շատ բաներ.
 Տատրակիկն իջաւ ցած ու ցած
 Կըրծկունքն ի գետին ըզկո՛ւկո՛ւ ճըւաց.
 Հովին ու հօտաղ, գառինք, եզն ու կով
 Գոհացան զԱստուած՝ մարգեր⁵ շուրջ գալով։
 Հանց քեզ տէրն է տուել զարուն գեղեցիկ
 Որ դրախտի նմանիս Հայոց աշխարհիկ.
 Դրախտիկն որ անցել դառնայ քեզ գարնամբ
 Զինչ պայծառ արևն որ ծածկէր ի յամբ։

Բայց Նահապետիս ի՞նչ ասեմ ծերուկ
 Որ եմ քան զամեն ծաղիկ վաղանցուկ.
 Իմ գարունս անցել ու հասել աշուն,
 Յամբած տերևուկս ըսպասեմ հովուն
 Թէ ե՞րբ ի լերանց ծոցուն փըչէ խոր
 Զըզէ անկըսկիծ զիս ի մահուն ձոր։
 Նահապետիս կեանքն եղաւ բաւական

1. Թեկեց, թռաւ։ — 2. Անգումամ, յանկարծ, շուտ շուտ — 3.
 Երեք մետ, կրկն անգամ։ — 4. Երեւտ, տուաւ։ — 5. Մարգ, յրոտ և
 խոտաւէտ տեղ։

Խընդութեամբ կեցաւ ի յիւրն Հայաստան.
 Ժամ է որ երթայ ի յայն հայրենիք
 Ուր իսկի չզատուին եղբարք սիրելիք.
 Խընդութեամբ կ'երթամ քեզնից՝ Հայաստան,
 Քեզնից առած հողս՝ ի քեզ ասեմ թաղման.
 Ի քո ծոցէդ վեր կանգնեցաւ Աղամ
 Ես ի քո ծոցէդ տ'եւնեմ անթառամ:

Ա.Լ.ԻՇԱՆ (Նոռազք)

Ի Մ՝ ԱՍՏՂԸ


Այգեստանին մէջ ինչ անուշ ես, կեանք,
 Տակ լուսընկային, աստեղց հոյլերուն.
 Երբ Աստղընբերդի սրընգին արձագանգ՝
 Անկեղծիկ երգեր ծաւալէ՝ հեռուն:

Կ'երևին երբեմն ալիք Եփրատայ,
 Կ'օրօրէ հողմիկ արտերն ու այգի.
 Տեսնուին հեռուն՝ հօտեր բացօթեայ,
 Ճրագով հընձաններ, կըղզիներ կեանքի:

Ու դաշտին մէջ ալ ցանուած գիւղօրէն,
 Լուսավառ ծառոց մէջ ու շուքերուն
 Հոն կը ննջէի, հմայուած, մեղմօրէն՝
 Ճակատըս դէպ իմ աստղը դողդոջուն:

Մայր չըքնաղ, Տարօն, ուր տեղ Պատմութիւն
 Բնութեան հետ մըրցի գեղով Երագոց.
 Ուր տեղ յԱստղընբերդ կ'եւնեն, իրիկուն,
 Փառքը և Անցեալ՝ լուսնով ոսկեգօծ...

1. Ծաւալէ, կը տարածէ:



Հայոց աշխարհի աշխատատարները

Զերդ մանուկ իր մօր՝ ծոցիդ մէջ նընջեմ,
 Երկիրն ուր մահն ալ, մահն ալ անուշ է.
 Լուսընկայդ իջնայ խոտն զիս ծածկէ,
 Սրինգը հընչէ բուրներու մէջէն:

Ու սիւզդ՝ անցելով դամբանիս՝ վրայէն,
 Կեանքիս թառամած՝ ըլլայ ողբերգուն.
 Հո՛ն, հոն նընջեմ ես յաւէժ՝ մեղմօրէն
 Ճակատըս դէպ իմ աստղը դողդողուն:

Հ. ԿԱՐԱՊԵՏ ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

Ս.ՔԱՂԱՂԸ ԵՒ ՄՈՒԿԸ

Օր մը պտըտելու ելեր էր Աքաղաղը, ու հանդիպեցաւ Մուկին. և որովհետեւ երկուքն ալ անօթի էին, որոշեցին միասին երթալ ուտելու բան մը գտնելու համար: Պարկիկ մ'առին ու ընկոյզի անտառի մը մէջ մտան. Աքաղաղը թռաւ ելաւ ծառի մը վրայ, Մուկը վարը մնաց, ու ընկերոջ փրցուցած և վար նետած ընկոյզները պիտի հաւաքէր ու պարկին մէջ պիտի դնէր:


Մուկը՝ որ խաբել կ'ուզէր զԱքաղաղը, ընկոյզներուն միջուկը՝ կ'ուտէր ու կեղևները պարկին մէջ կը լեցնէր: Իսկ Աքաղաղը՝ չգիտնալով Մկան խարդախութիւնը, կը ժողվէր ու կը ժողվէր: Ժամանակ մ'անցնելէն վերջ, Աքաղաղը հարցուց. « Պարկը լեցուեցա՞ւ »: Մուկը պատասխանեց. « Ի՞նչ շատ կ'ուզէ: Կէսն է »: Աքաղաղը կը ժողվէր, բայց պարկը չէր լեցուեր: Քիչ

1. Սիւզ, մեղմ հով. — 2. Դամբամ, դերեզման. — 3. Յաւէժ, սմբուտ. — 4. Միջուկ, ընկոյզին մէջի պտուղը:



Փոքրիկիմ աղօթքը

մը վերջ դարձեալ հարցուց Աքաղաղը. « Լեցուեցա՞ն » : Պատասխանեց Մուկը. « Ո՛չ, դուն ժողվելու նայէ : Երբ լեցուի՝ լուր կու տամ քեզի » : Աքաղաղը կը ժողվէր, կը ժողվէր, ու ընկոյզները պարկը չէին մտնել : Վերջապէս ուզեց անձամբ տեսնել թէ ո՞ւր հասեր է, ու տեսնելով որ ի զուր տեղ աշխատեիր էր, բարկացաւ, ու կտուցովը այնպիսի ուժով հարուած մը տուաւ Մկան զլխուն որ ծակեց գլուխը ու ըզիզը կ'երևնար ծակէն : Խեղճ Մուկը՝ որ ինքզինքը արդարացնելու համար, բերանը բանալու ժամանակ չէր ունեցեր, լալով հեռացաւ : Հանդիպեցաւ շան մը ու ըսաւ. « Շուն, շուն, տուր ինծի մազէդ, մազը կը դնեմ զլխուս, վասն զի Աքաղաղը գլուխս կտորեց կէս ընկոյզ կերած ըլլալուս համար » : Ու Շունը. « Ինծի հաց տուր » : Մուկը հացագործի մը գնաց ու լալով աղաչեց. « Հացագործ, հացագործ, ինծի հաց տուր. հացը կու տամ Շանը, Շունը ինծի մազ կու տայ, մազը կը դնեմ զլխուս, վասն զի Աքաղաղը գլուխս կտորեց կէս ընկոյզ կերած ըլլալուս համար » : Հացագործը պատասխանեց. « Քեզի հաց կու տամ, եթէ ինծի փայտ տաս » : Մուկը ինքզինքը անտառի մը մէջ ձգեց, և, կխամեո՞ աղաչեց. « Անտառ, անտառ, ինծի փայտ տուր, փայտը կու տամ հացագործին, հացագործը ինծի հաց կու տայ, հացը կու տամ Շանը, Շունը ինծի մազ կու տայ, մազը կը դնեմ զլխուս, վասն զի Աքաղաղը գլուխս կտորեց, կէս ընկոյզ կերած ըլլալուս համար » : Իբրև պատասխան անտառը ըսաւ. « Զուր կ'ուզեմ » : Մուկը մօտ գետ մը գնաց, ու ջուր ուզեց. « Գետ, գետ, ինծի ջուր տուր, ջուրը կու տամ անտառին, անտառը ինծի փայտ կու տայ, փայտը կու տամ հացագործին, հացագործն ինծի հաց կու տայ, հացը կու տամ Շան, Շունը ինծի մազ կու տայ, մազը կը դնեմ զլխուս, վասն զի Աքաղաղը գլուխս կտորեց կէս ընկոյզ կերած ըլլալուս համար » :



Նոյեմբերի 1-ին 1918 թ. Նոյեմբերի 1-ին

Գետը ջուր տուաւ և ըսաւ. « Ա՛ն »: Մուկը՝ ուրախութենէն որ քիչ ժամանակուան մէջ վէրբը պիտի առողջանայ, սկսաւ անյագարար խմել, և որպէս զի շուտով գոհացնէ անտառը, խմեց, խմեց, ուռեցաւ, դարձեալ խմեց ու պայթեցաւ:

Այս առակը կը սորվեցնէ թէ պէտք չէ ըրած յանցանքն նուազեցնելու ջանք ընել սուտ խօսելով:

Կ. Մ. ՈՌԻՖՈՅ

ԱՂՈՒԷՍ, ՇՈՒՆ ԵՒ ԱՔԱՂԱՂ


Շունը և արագազը՝ բարեկամութիւն հաստատելով, միասին կը ճամբորդէին: Գիշերը վրայ հասաւ:



Աղուէս

Անտառուտ տեղ մը քաշուեցան. արագազը ծառի մը վրայ ելաւ ու թառեցաւ ճիւղերուն մէջ, շունը՝ վարը, նոյն ծառին բունին խողոջին մէջ. մտաւ ու քնացաւ: Գիշերը անցնելու վրայ էր. արշալոյսն սկսեւ էր. արցա-

դադր՝ իր սովորութեան համեմատ, սկսաւ բարձր ձայնով երգել: Աղուէսը, այդ ձայնը լսելով և զարազաղը ուտելու փափաքէն մղուած՝ մօտեցաւ, ու ծառին տակը կանգ առնելով, պոռաց արազաղին: Ո՛հ, ի՛նչ զեղեցիկ



Շումը

կենդանի ես և օգտակար մարդկութեան: Ահ, իջի՛ր վար, միասին երգենք առաւօտեան երգը ու զուարճանանք:

Արազաղը պատասխանեց. — Բարեկամ, մօտեցիր ծառին բունին, ու արթնցուր դռնապանս: — Աղուէսը մօտեցաւ. իսկ շունը՝ յանկարծ դուրս ցատկելով, կտոր կտոր ըրաւ զինքը:

Ն. ԹՈՄԱՋԻՈՑ

ԱՄՊԵՐՈՒ ԺԱՄԲԱՆ

Մեծ կայլակներ կ'երերան
 Գիշեր ատեն բիրիս վրան.
 Հառաչներ գողտր ու խորունկ
 Շըրթունքիս վրայ կը թըրթոան.
 Ո՛հ, զանոնք ո՛վ պիտ' տանի
 Մինչև աշխարհ մայրենի:
 Ծո՛վ, քեզ կու տամ իմ հրաւէր.
 Դո՛ւ արցունքիս առ գետեր.
 Թէ՛ զան առջևդ ափունք՝
 Հողմին յանձնէ իմ խօսքեր.
 Թող ինք բառերըս զաղտնի՝
 Տանի յաշխարհ մայրենի:
 Սուրբ է աւանդն, ո՛վ հողմիկը,
 Սիրոյ խօսքեր կը տանիք.
 Բառ մ'ալ ճամբան չըմոռնաք,
 Թէ՛ վրտանգի հանդիպիք՝
 Ամպին տըւէք որ տանի՝
 Մինչև աշխարհ մայրենի:
 Ա՛լ կը յուսամ աներկբայ
 Որ խօսքըս հոն պիտ' երթայ.
 Զի ամէն ամպ սև և թայ
 Լի շանթերով վայրենի,
 Ուրիշ աշխարհ չըմըտած
 Պէտք է երկրէս միշտ անցնի:

Հ. Կ. Տ. ՍԱՀԱԿԵԱՆ

Ջ Ի Ի Ն

Դաշտերուն, ճամբաներուն
 վրրայ թեթև և լրուկ,
 կ'իյնայ ձիւնը դարձադարձ
 Դառնալով:


Կը պարէ ճերմակ տարափն
 լայն երկնից մէջ ծաղրածու,
 կը հանգչի յետոյ գետին
 Պարտասած¹:

Անխըլիւրտ² բիւր ձևերով
 Տանեաց վրրայ, ծըխհանաց³,
 Կոթողաց, պարտէզներու
 կը քնանայ:

Չորս զին խաղաղութիւն.
 Փակուած խոր մոռացօնքի
 Միջև աշխարհ անտարբեր
 կը լրէ...:

Բայց անհուն հանդարտութեան
 Մէջ կը դառնայ սիրտն յուշերու⁴
 Եւ մարած սիրոյ մը վրայ
 կը մտածէ:

ԱՏԱ ՆԵԿԻԻ (Թարգ. Հ. Ա. Գազարեանի)



1. Պարտասած, յոգնած. — 2. Անխըլիւրտ, անշարժ. — 3. Երկնային,
 առ. ճառագ. — 4. Յուշ, յիշատակ:


Վոլկոմեց





400

Տիրան



լանկար

ԿՐԱԿ, ԶՈՒՐ ԵՒ ՊԱՏԻՒ

Կրակը, ջուրը և պատիւը անգամ մը ընկերութիւն կազմեցին: Կրակը երբէք տեղ մը չի կրնար կենալ, ջուրն ալ միշտ շարժման մէջ է. ուստի ասոնք իրենց բնութենէն մղուած, բռնադատեցին պատիւը որ իրենց հետ ճամբորդութիւն ընէ: Բայց մեկնելէն առաջ, երեքը միասին խորհրդածեցին թէ, որպէս զի, եթէ երբէք մէկմէկէ հեռանալու ըլլան, մէկզմէկ չկորսնցնեն և մէկզմէկ վերստին գտնեն, պէտք է նշան մ'որոշել: Կրակը ըսաւ. «Եթէ երբէք ձեզմէ բաժնուիմ, ուշադրութիւննիդ դարձուցէք հոն՝ ուր ծուխ տեսնէք, անպատճառ զիս հոն կը գտնէք. այս է իմ նշանս»: — Զուրը ըսաւ. «Եթէ զիս կորսնցնէք, մի՛ փնտռէք հոն՝ ուր չոր է կամ ուր երկիրը պատընտած է, հապա հոն՝ ուր կը տեսնէք ուռնիներ, եղեգներ, բարձր և կանանչ խոտեր, և այդ տեղերը կը գտնուիմ»: «Իսկ ես», ըսաւ պատիւը, «աչքերնիդ լաւ բացէք, և սևեռած պահեցէք վրաս, վասն զի եթէ երբէք չար բազըզ զիս ճամբայէս դուրս հանէ, և կորսուիմ անգամ մը, այլ ևս երբէք չէք կրնար գտնել զիս¹»:


Գ. ԿՈՆՄԻ.



1. Հեղինակը այս առակով կը սորվեցնէ թէ պէտք է մարդ իր պատուոյն վրայ արթնութեամբ հսկէ, վասն զի երբ մէկը պատիւը կորսնցնէ, դժուարաւ կը գտնէ:

Փ Ի Ղ,

Յաղթանդամ¹ կենդանի մըն է փիղը. մորթը թանձր է և զրեթէ բուրբովին լերկ², ականջները ալանդակ, աչքերը շատ սզգտիկ, Երկու տեսակ են ատամունքն,



֓իղ

աղօրիք՝ որոնք չեն երևիր, շնատամունք՝ որոնք պատիճին³ երկու կողմէն զուրս ցցուած են. կը սնանի բուսեղինօք: Կճղակը⁴ պատեալ է պինդ մորթով՝ ուս-

1. Յաղթամդամ, մեծդի. — 2. լերկ, անմաղ. — 3. Պատիճ, փէղին բէթը. — 4. Կճղակ, պճեղ.

կից դուրս ինկած կ'երևին հինգ մատուներ և եղընգունք: Պատիճը՝ որ քթին շարունակութիւնն է, ճակատէն կը սկսի և աղեղնաձև մինչև գետին կը հասնի, ասով բռնեբը իր վրան կը նետէ, կերակուրը կ'առնէ, թշնամին գետին կը տապալէ՝...

Հիմա երկու տեսակ փիղ կայ. մին կ'ըսուի Հրեղ-կային, միւսը, Ափրիկեան փիղ, իրարմէ շատ քիչ կը տարբերին: Ափրիկեան փիղին բարձրութիւնը 5 մեղը է, պատիճը 2,50, ծանրութիւնը 4000 հազարազրամ. վայրենի է և դժուարաւ կ'ընտելանայ՝:

Հեղկային փիղը արբրիկեանէն փոքր է, ընտանի, խորագէտ³ և իմաստուն, շատ ուժով է և կընայ 80 հազարամեղը տեղ ճամբայ ընել առանց վնասուելու և 10000 հազարազրամ բեռ մ'ալ շալկած: Էջ փիղը երկու տարի յղի կը մնայ և երրորդ տարին ձագ մը կը բերէ. բովանդակ կենաց մէջ 40 ձագ կը բերէ:

Փիղերն աշխարհիս մէջ գտնուած ամենէն մեծ կենդանիներ են: Երբ երկրէ երկիր կը գաղթեն, էջ փիղերը իրենց պատիճով կը տանին ձագերնին: Խմբով գացած ատենին շատ դժուար է անոնց հետ պատերազմիլ, իրարու կը մօտենան և ահագին պարիսպ մը կը ձևացնեն. եթէ չվնասենք, իրենք ալ մեզի չեն վնասեր: Սաստիկ ռիսակալ են. քթերնին շատ մեծ ըլլալով հոտառութիւննին զօրաւոր է, հեռաւոր տեղերէ մարդու հոտը կ'առնուն: Փիղերը ընտանենալէն վերջ ամէն կենդանիներէ աւելի քաղցրաբարոյ⁴ և հնազանդ կ'ըլլան, կը սիրեն իրենց տէրը.

Ազատութեան մէջ 300-400 տարի կ'ապրին: Մարդու օգտակար են և մեծամեծ ծառայութիւններ կ'ը-

1. Տապալել, դեռն փռել. — 2. Ընտելանալ, ընտանի ըլլալ. — 3. Խորագէտ, խելացի, վարդեաորդի. — 4. Բաղցրաբարոյ, անուշ ընաւորութիւն ունեցող.

նեն, բեռներ կը կրեն, և մինչև անգամ պատերազմներու մէջ կը զործածուէին երբեմն:


Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ (Կենդանաբանութիւն)

ՍԱՏԱՆԱՆ ԵՒ ՇՈՒԲԸ

Երբեմն Սպանիոյ Սալամանկ քաղաքին մէջ սատանան կախարդութեան դաս կու տար: Իր աշակերտներուն կանխաւ ըսեր էր թէ, ընթացքը լմնալէն վերջ, իրբև վարձք, պիտի առնէր, հոգևով և մարմնով, այն աշակերտը՝ որ ամենէն վերջինը պիտի մնար սրահին մէջ: Հասաւ որոշուած օրը. ունկնդիրները վիճակ ձգեցին զիտնալու համար թէ ո՞վ պիտի վճարէ այդ պարտքը: Վերջին մնացող աշակերտը՝ զինքը յափշտակելու մօտեցող սատանային կը ցուցնէ պատին վրայ իր շուքը: Սատանան՝ զայն մարդ կարծելով, կը յարձկի բռնելու. այդ միջոցին ուսանողը դուրս կը փախչի:

ԱՐԴՈՒՐՈՅ ԿՐԱՅ





Հայրենի գետի ափ

ՍՆԱՊԱՐԾ ԶՈՐԻՆ

Երբ զըլիւրնուս փորձանք մը գայ
Այն ժամանակն է որ ահա
Մեր չափը լաւ կը հասկընանք,
Կը խոնարհինք ու գոհ կ'ըլլանք:

Հրպարտ Զորին կը պարծենար
Իրեն նախնեաց ազնուութեամբ,
« Իմ մօրս պէս, կ'ասէր, չըկար
« Ո՛չ ուժով, ո՛չ գեղեցկութեամբ.
« Նա չէր վազեր, այլ կը թըռչէր.
« Տասնէն աւելի ձիւրնթացք¹
« Յաղթեց, առաւ ոսկի թաս.
« Եւ իր տէրանց ըստացողաց
« Վաստըկցուց մեծ մեծ զըրաւներ².
« Նա իրեն կենդանութեան՝
« Աշխարհի մէջ էր յիշուական³:
« Իսկ ես նայէ ի՛նչ աննըշան
« Կեանք կ'անցընեմ մօրս անարժան
« Սա Տէրտիրոջ դուռը այսպէս
« Մինչև ե՛րբ քաշ պիտի գամ ես »:

Բայց ոչ երկար չը մընաց
Իր Տէրտիրոջ դուռը նա:
Բաղդը դարձաւ յեղակարծ⁴
Իշաղացքին⁵ եղաւ ծառայ:
Այն ժամանակ յիշեց Զորին,

1. Զիրնթաց, ձի վաղցնելը. — 2. Գրաւ, տ. պէս. — 3. Յիշուական, յիշուելու արժանի, անուանի. — 4. Յեղակարծ, յանկարծ. — 5. Իշաղացք, իշով դառցող շագանակ.

Որ իր հայրն ալ ջաղացպանին
Աշխատաւոր ցած իշուկն էր,
Որ միշտ տատասկ¹ ու ծեծ կ'ուտէր:

Հ. Ք. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ (Առակք)

ԱՐԵՒԵԼՔԷՆ ԿՈՒ ԳԱՍ

Մըրմընջեցի² ծայրը բըլրան
Առաւօտեան աղօթքն անոյշ.
Էակներու հետ միաբերան՝
Երգեցի զայն՝ որ զըրկէ լոյս.

Ու խընդրեցի տալ ամբաւ օր
Իմ սիրելեացս հեռաւոր:

Արև, ո՛վ արև, քեզ կը դիմեմ.
Արևելքէն դուն կու գաս հոս...
Հանդիպեցա՞ր, անցած ատեն
Վըտակներու ծիրանեհոս³.


Տարի՞ր արդեօք պայծառ մի օր,
Հայրենիքս իմ հեռաւոր:

Տեսա՞ր հոն վար սիրուն էդեմ,
Ուսկից էփրատը մտախոհ⁴
Կ'անցնի դղեկաց ըստորոտէն⁵,
Ու կիսաւեր մատուռներու.

Ճանճանչելով տըլի՞ր համբոյր
Աւերակացն այն հեռաւոր:

Գեղջուկ կընոջ գողտըր⁶ երգով,
Տեսա՞ր մեկնումը նախիրին,

1. Տատասկ, փշոտ բոյս: — 2. Մըմջել մեղմ ձայնով ըսել: —
3. Ծիրաննճոս, կարմիր գոյնով վազող: — 4. Մտախոհ, մտածկոտ: —
5. Ստորոտ, տակ: — 6. Գողտըր, փափուկ, անուշ:



Արքունական նավագնացութիւն

Ջըւարթ ամբոխ՝ մատրան մը քով,
 խաղողկութի՞ մէջ էր այգին.

Ճաճանչելով տըւիր համրոյր,
 Յիշատակացն իմ հեռաւոր:
 Բայց զըրկիս մէջ լոյս մը կ'իյնայ,
 Մեր նայուածքներ վըրադ, ըսէ՛,
 Հանդիպեցան միմեանց հիմայ,
 Կեցիր ճաճանչ՞, կեցիր, խօսէ՛,
 Ե՞ս փոխադարձ ջերմիկ համրոյր,
 իմ սիրելեացս հեռաւոր...:

Հ. Կ. Տ. ՍԱՀԱԿԵԱՏ


Տ Ա Ն Ձ Ե Ր Ը

Հին պատմութիւններու մէջ կը կարդանք թէ փոր-
 թուգալի մէջ բարի մարդ մը կայ եղբր՝ որ միակ զաւակ
 մ'ունեցեր է և գոր շատ կը սիրէ եղբր: Տեսնելով տղուն
 բարեմիտ՝ ըլլալը և բարիք ընելու միտումը՝, կը հսկէր
 վրան որ շըլլայ թէ ուրիշ շատերու չար օրինակէն
 աւրուի: Ետ անգամ կը խօսէր ապականեալ՝ բար-
 քերու վրայ և կը յորդորէր զաւակը հեռու կենալ գէշ
 ընկերութիւններէ, և, այն փափուկ հասակին մէջ, կը
 հասկցնէր տղուն թէ ո՛վ է որ չար կը գործէ և թէ ին-
 չո՞ւ կը գործէ:

Տղան հօրը խրատներուն մտիկ կ'ընէր, բայց ան-
 գամ մը խորհրդածեց. « ինչո՞ւ համար կը վախնաս, հայ-
 րիկ: Ես ապահով եմ որ աստերու ետեւէ երբեք պիտի

1. Ամբոխը, բազմութիւն: — 2. Ճամբանչ, ճանապարհ: — 3. Բա-
 րեմիտ, բարի սիրտ ունեցող: — 4. Միտում, յօժարութիւն: — 5. Ապա-
 կանալ, աւրուած:

չերթամ, և, մանաւանդ, կը յուսամ թէ իմ օրինակս
ուրիշները ուղղութեան պիտի բերէ:




Նիւտոն գրաստութիւն

Բարի հայրը տեսնելով որ յորդորները իր ուզած
արդիւնքը չեն տար, ուզեց ուրիշ հնարք¹ մը բանեցը-
նել: Կողովի մը մէջ լեցուց ամենէն գեղեցիկ և ընտիր

1. Հնարք, միջոց, հար.

տանձեր, բայց ինչ ինչ նշաններէ տեսնելով որ անոնցմէ ոմանք մօտ են արուելու, զանոնք ալ խառնեց լաւերուն հետ, ու տղուն ընծայ ըրաւ: Տղան ուրախացաւ. բայց, ինչպէս կը հանդիպի այն հասակին մէջ, ուզեց աչքովը տեսնել իր հարստութիւնը, և երբ զիտելով կը համրէր զանոնք, բացազանչեց. — Հայրիկ, ինչ ըրերես, ինչո՞ւ համար ասոնք խառներ ես առողջ տանձերուն մէջ, առողջներն ալ կը վնասուին: — Ատոր վրայ մի՛ մտածեր, զաւակս, պատասխանեց հայրը, — այն տանձերը այնպիսի յատկութիւն մ'ունին որ լաւերը իրենց առողջութիւնը կը հաղորդեն միւսներուն: — Պիտի տեսնես, հայրիկ, — պատասխանեց տղան, — որ քիչ օրէն ըսածիդ հակառակը պիտի ըլլայ: — Հայրը ուզեց որ փորձով տեսնեն. տղան, հակառակ իր կամաց, հնազանդեցաւ: Կողովը դրին արկեղ մը մէջ՝ որուն բանալին հայրը քովը պահեց: Տղան քանի մ'անգամ խնդրեց հօրմէն որ բանայ արկը, սակայն հայրը օրէ օր կը ձգձգէր: Վերջապէս օր մը ըսաւ. — Այսօր կըրնաս բանալ, ահա աստիկ բանալին:

Հագիւ բացաւ կողովին բերանը, տանձ չգտաւ, ամէնն ալ մզլտտեր և արուեր էին: — Ո՛հ, ես չըսի՛, — կը պոռայ տղան, — որ այսպէս պիտի ըլլայ: Ըսածս չեմ: Հայրիկ, յանցանքը քուկդ է, ինծի մտիկ չըրիր: — Այդչափ ցաւելու բան չկայ, — պատասխանեց հայրը, գորովանօք համբուրելով տղան: — Դուն կը զանգատիս որ ես չուզեցի հաւատալ ինչ որ կ'ըսէիր տանձերուն համար: Իսկ դու ինծի կը հաւատայիր երբ ես քեզի կ'ըսէի թէ չարերու ընկերութիւնը կ'արէ բարիները: Կարծես թէ այդ քանի մը տանձերու փոխարէնը չե՞մ կրնար տալ քեզի: Սակայն, ես չեմ գիտեր թէ ո՞վ պիտի փոխարինէ ինծի, երբ դուն աւրուիս:



Երևանի շրջանի քաղաքը

Հ. Գ. Գ. Գ.

ՃԱՆՃԸ ԵՒ ՏՈՒԻԱ

Տորիա անունով մէկը, աշխարհիս ամենէն բարի և խաղաղասէր մարդը՝ որ բնաւ մէկու մը նեղութիւն տալ կամ ձանձրոյթ պատճառել չէր ուզեր, և ոչ իսկ անբան անասուններուն, միտքը դրեր էր փորձել թէ պիտի յաջողի՞ կենաց մնացած քիչ օրերն անցնել առանց նեղութիւն տալու ուրիշի մը. բայց, կ'ենթադրուի, նաև առանց նեղուելու ուրիշէ մը: Օր մը, կերակուրը ուտելէն վերջ, թիկնաթոռի՝ մը վրայ երկնցած կը հանգչէր, ու ահա անիծեալ ճանճ մը կը սկսի թռչտիլ երեսին վրայ: Տորիա՝ հաստատուն իր առաջադրութեան վրայ, ձեռքը թեթև մը շարժեց միայն զայն հեռացնելու համար, սակայն ճանճը կրկին ու կրկին դարձաւ: Այն ատեն զլիարկը հանեց և սկսաւ հովահարել² երգելով և ոտքովը ամանակ³ զարնելով. բայց կենդանին, կարծես ի հեճուկս⁴, չէր հեռանար: Մտտովը թեթև մը անոր դպաւ, պարզ՝ խօսք հասկըցնելու համար. ընդհակառակն, ճանճը՝ կատղած, աչքը մտաւ, քթին մէջ մտաւ, դէմքին վրայ կը քալէր, իբրև թէ իր տան մէջ ըլլար: Ի՞նչ կը կարծէք թէ ըրաւ Տորիա: Անշարժ կեցաւ, ու թողուց որ ուզածին պէս երթայ գայ մինչև մտաւ շրթունքներուն մէջ: Սղմելով շրթունքները կրնար վերջ տալ խաղին, բայց ուզեց քաղաքավարութեամբ յաղթել, ուստի մեղմով⁵ շրթունքները քովէ քով բերաւ միայն զայն կեցնելու համար, ապա երկու մատովը փափկութեամբ բռնեց, ծառայն կանչեց ու ըսաւ. «Անդրէաս, հոս եկուր, բաց պատուհանը»: Անդրէաս


1. Թիկնաթոռ, մեծ և թեւով աթոռ. — 2. Հովահարել հովաբերել. — 3. Ամանակ, հրդեհ շափ. — 4. Ի ճեճուկս, տ. իմատ իչիմ. — 5. Մեղմով, կամայեղով, յուշիկ:


պատուհանը բացաւ, ու Տորիա՝ ճանճը ազատ թողլով
որ թռչի, խնտալով կ'ըսէր. « Տիկին, աշխարհք լայն
է, կրնանք երկուքնիս ալ ապրիլ առանց մէկմէկու նե-
ղութիւն տալու »:

Յ. ՃՈՒՍԴԻ

Ճ Ա Ն Ճ

Փչեց քամին
Հիւսիսային,
Ու ձիւն կու գար:
Ճանճ կը մըսէր,
Քանզի ցուրտ էր:
« Ո՞հ, ո՞ւր զըտնեմ տեղ մը տաքուկ,
Ուր տեղ երթամ ես հիմակուկ »:
Կ'ըսէր, կ'ըսէր,
Կը թռչըտէր:
Յետոյ պատին վերայ կեցաւ,
Շունչ մը առաւ ու զայս ըսաւ.
« Աստուած, այսպէս սրմբած սըքլած
Ու կաս—կապոյտ՝ ցրտէն եղած
Մըսիմ,
Սատկի՛մ »...:
Ըսաւ,
Լացաւ:
« Միտքս ընկաւ, հա՛,
Ի՞նչ լաւ կ'ըլլայ,
Մանուկն ահա տես պառկած կայ,
Անուշ անուշ կը քնանայ.
Անշուշտ եթէ երթամ հիմայ,
Նա կ'ողորմի խեղճիս վրայ:





տանկար

Երթամ

Ձայն տամ¹» :

Ուստի գնաց,

Անոր ճրւաց.

« Մամուկ

Քուրուկ,

Ախ, առնէիր զիս քո քովիկ,

Ու ինձ տայիր տեղ կրտորիկ,

Մինչև անցնին օղբերս ցուրտ,

Ու դադարէր հովս անձրևոտ :

Ամտե մամուկ,

Ունեցիր գութ²» :

« Մարի³, դժն ես, ով իմ քուրուկ,

Ահա քեզ հոս տեղ կայ տաքուկ.

Սաւան ունիմ հոս շատ փափուկ,

Ես կը պլլեմ տաքուկ տաքուկ

Ըզքեզ

Կը լսե՞ս» :

Անմիտ ճանճն հաւատաց,

Ու թրուաւ հոն գնաց :

Ուր մեր մամուկ ականջն ի վար

Անոր այսպէս կը փսփսար.

« իմ փորիս մէջ տաքուկ տաքուկ

Հանգիստ ըրէ, ո՛վ իմ քուրուկ

Ու պանծիկ³

Ով ճանճիկ» :

Առակիս միտքն այս է միայն

Երբ ուրիշի տանը դըրան

Չարնեկ ուզես,

Խորհելու ես :

Վ. Վ. ՄԻՆԱՍԵԱՆ (յիսնեակ տուկք)

1. Ձայն տամ, արթնցնեմ. — 2. Մարի, բացազանչութիւն Պարտիզակոսի. — 3. Պանծիկ ըմել, պանդիլ.



Ս. Գրիգոր Նուս. կը մկրտէ Տրդատ Թագաւորը

ԱՐԾԻԻԸ ԵՒ ՕՁԸ

Արծիւը, երկար ժամանակ արևը դիտելէն վերջ, աչքերը դարձուց իր տակը գտնուող երկրի անսահման տարածութեան վրայ, և թևատարած¹ կեցեր ու կը վայելէր այն զանազան և շքեղ² տեսարանը: Քիչ մը հեռուն, ժայռի ճեղքուածքին մէջ, անհեթեթ³ օձ մը, կրակոտ աչքերը անոր վրայ տնկած՝ կը գալարուէր ու կը տարածուէր, կը փորձէր անոր վրայ նետուիլ, սակայն, չկարենալով ինքզինքը երկար ատեն կանգուն բռնել, փորին վրայ նորէն գետին կ'իյնար, ու զայրութէն ու կատաղութենէն հողը կը խածնէր: Տեսնելով որ ի զուր կը ջանայ նպատակին հասնելու, սկսաւ շէնլ⁴ անոր ետեւէն այնպիսի կատաղութեամբ՝ որ հաւասար էր զինքը կրծող նախանձին: Արծիւը վերջապէս տեսնելով զայն. «Ի՞նչ կ'ընես» ըսաւ, «զազիր⁵ կենդանի: Ի՞նչ ունիս ինծի դէմ: Գիտեմ, իմ բարկութիւնս շարժել կ'ուզես, ու ճիրաններուս⁶ տակ խորտակուիլ, կ'ուզես որ առնում զքեզ և օդին մէջ բարձրացնեմ: Ի՛չ, այդ պատիւը չեմ ըներ քեզի, շէ՛ մինչև որ պայթիս⁷, բայց սողայ»:

ՄԷԼՔԻՌԻԷ ՉԷՋԱՐՈՂԻԻ



1. Թևատարած, թևերը բացած: — 2. Շքեղ, շատ գեղեցիկ. — 3. Անհեթեթ, շատ խոշոր: — 4. Շէնլ, սուլելու: — 5. Չազիր, զգուհուի. — 6. Ժիրամ, ճանկ: — 7. Պայթիլ, ճաթիլ:

ԷՇԸ ԴՍՏԱԻՈՐ

Օր մը երգի վրայօք վէճի բոնուեցան սոխակը և կուկուն, իւրաքանչիւրը կը պնդէր թէ ինքը շատ վեր է միւսէն երգելու մէջ: Կուկուն կ'ըսէր թէ իր երգը միայար է, բնական և ամանակով: Սոխակը կը պնդէր



Արծիւը

թէ իր երգը շատ աւելի ներդաշնակ է քան ուէ թռչնոյ երգ, և, որպէս զի կոխուով չլմնցնեն խնդիրը, երկուքն ալ հաւանեցան երրորդի մը դատաստանին յանձնել զայն. ո՛վ կ'ուզէ ըլլայ այդ երրորդը: Ու թռան, երբ կանանչ մարգագետնի մը վրայէն կ'անցնէին՝ տեսան

մեծաշուք¹ էջ մը զոյգ մը ականջներով՝ իւրաքանչիւրը կէս կանգուն երկայնութեամբ: Կուկուն ուրախութեամբ ըսաւ սոխակին. « Աւելի առաջ չերթանք, բարեբար աստուածները դատաւորը մեր դիմացն հանեցին, և որովհետեւ ականջն է որ կրնայ դատաստան ընել երածը տութեան վրայ, անկէց զատ ո՞վ կրնայ աւելի ճիշտ և պատշատ վճիռ տալ »: Այսպէս խորհրդածելով իջան տանձի ծառի մը ճիւղերուն վրայ, և անկից խոնարհարար խնդրեցին էշէն որ հաճի, առանց կողմնակալութեան, լուծել իրենց վէճը: Էշն՝ որ աւելի ուտել կը փափաքէր՝ քան դատաւոր ըլլալ, հազիւ վեր վերցուց գլուխը, ու նորէն խոնարհեցնելով, ականջի շառաչին² շարժմամբ, հասկցուց վիճողներուն որ այն օրն դատ չէր տեսներ ինքը. բայց անոնք այնչափ աղաչեցին որ վերջապէս գլուխը բարձրացուց և ականջները նապաստակի պէս տնկելով, ըսաւ. « Երգեցէք, ու շուտ ըրէք, լսելէս վերջ ձեր երգերը, իմ խոնարհ կարծիքս կը յայտնեմ ձեզի »:

Նախ կուկուն պատրաստուեցաւ ըսելով. « Տէր դատաւոր, լաւ ուշ դիր երգիս՝ զոր պիտի լսես, մանաւանդ, արուեստին՝ որով կ'երգեմ »: Ապա, հինգ տասը կու, կու ընելէն վերջ, ուռեցաւ ու թևերը թօթուելով լռեց: Այն ատեն, սոխակը՝ առանց յառաջարանի, սկսաւ անուշ գեղգեղել³, և իր անուշ ձայնին մէջ այնչափ զանազանութիւն, գեղեցկութիւն և ներդաշնակութիւն դրաւ որ անտառներուն մէջ գտնուող բոլոր զազանները, հրապուրուած⁴ ձայնին աննման գեղեցկութենէն, հոն դիմեցին: Ու մինչ սոխակն երթալով կը ճոխանար, դատաւորը ձանձրացած երկայն փորձէն, այլանդակ զոռոյ

1. Մեծաշուք, մեծ պատիւ ունեցող, փառաւոր: — 2. Շառաչում, աղմուկ հանող: — 3. Գեղգեղել, սիրուն կերպով երգել: — 4. Հրապուրուած, ձգուած դէպ ի բան մը:

մ'արձկելով ըսաւ սոխակին. «կարելի է թէ քու երգդ աւելի գեղեցիկ է քան կուկուինը, բայց անոր երգին մէջ աւելի արուեստ կայ»:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՖՈՐԴԵԿՈՒԵՐՐԻ

ՄԵՂՈՒՆԵՐՈՒ ԹԱԳՈՒՀԻՆ

(Հէքերամ)

Կար չկար երկու արքունական իշխաններ կային որոնք օր մը իրենց հայրական տունէն փախան, ու հետաւոր երկրի մը մէջ իրենք զիրենք ամէն տեսակ շոայլութեանց և հաճոյքներու տուին, ու հակառակ իրենց սիրելիներու յորդորանքներուն, չուզեցին ընտանեաց մէջ դառնալ: Ասոնք պզտի եղբայր մ'ունէին, միամիտ, զոր Անմեղը կ'անուանէին: Սա երբ մեծցաւ, իր հօրը ըսաւ.

— Վեհափառ Տէր, հրաման տուր ինծի երթամ եղբայրներս գտնեմ:

— Գնա՛, զաւակս, և Աստուած տայ որ դժբախտութիւն մը չհանդիպի քեզի և զանոնք դարձնես տունս:

Անմեղը գնաց ու յաջողեցաւ գտնել իր ապստամբ եղբայրները, բայց ասոնք սկսան զինքը ծաղրել վասն զի կը պարծենար թէ ինքը գիտէ ապրիլ աշխարհի մը մէջ՝ ուր իրենք, իրմէ աւելի խելացի ըլլալով, նաւարեկեր էին:

— Դուն զմեզ տուն դարձնել կ'ուզես: Երթանք: — Միասին ճամբայ ելան, ու ճամբուն վրայ մըջիւններու բոյնի մը հանդիպեցան. մեծ եղբայրները կ'ուզէին աւրել այդ բոյնը զուարճանալու համար տեսնելով մըրջիւններու տագնապը և յուսահատութիւնը, տեսնելու համար թէ ինչպէս պիտի վազեն հոս հոն իրենց հաւ-

կիթներուն տեղ մը գտնելու համար: Սակայն Անմեղը միջամտեց. — Հանգիստ թողուցէք այդ խեղճ արարածները և գիրենք մի՛ վրդովէք: —

Քիչ մ'ալ առաջ գնացին ու հասան լճակի մը եզերքը՝ որուն մէջ գունագեղ փետուրներով բազիր կը լողային. մեծ եղբայրները առաջարկեցին բռնել անոնցմէ զոյգ մը և խորովել, պզտիկ եղբայրը դարձեալ ազաչեց. — Թողուցէք հանգիստ, չեմ ուզեր որ սպաննէք զանոնք: —

Դեռ աւելի հեռուն, ծառի մը խոռոչին մէջ տեսան մեղուններու փեթակ մը, այնչափ մեղրալից՝ որ մեծ մաս մը մեղրի կը վազէր բոյնէն վար: — Մտօրին տակ չոր տերևներ հաւաքենք ու կրակ տանք, մեղունները կը փախչին ու մենք կը ժողվենք մեղրը: — Ո՛չ, ո՛չ, չեմ ուզեր որ մեղունները այրէք, — այս անգամ ալ հակառակ կեցաւ Անմեղը:

Ետ երկար ճամբորդութեան պալատ մը հասան, ներս մտան, անմարդարնակ էր, և ոչ ծառայ մը կար՝ որ օրական աշխատութիւններով զբաղէր. ախոռներուն մէջ չէր լսուեր ձիու մը խրխինջը և դափելը, մարդիկ և կենդանիները քար դարձեր էին:

Արագութեամբ անցան ամայի սրահներէն մինչև հասան դուռ մը՝ որ երեք փականքներով զոցուած էր ու արգելք եղաւ իրենց. դուռը փակուած է, իրաւ է, բայց մէջտեղը բացուած դռնակէ մը կարելի էր աչք մը տալ այն խորհրդաւոր և այնչափ խնամքով զոցուած սենեակին: Երեք եղբայր կարգաւ դիտեցին դռնակէն, ու տեսան կարճահասակ և սպիտակ մազերով մարդ մը՝ որ նստեր էր ստուի մը դիմացը: Կանչեցին մէկ անգամ, երկու անգամ, ու նա կարծես չէր լսեր, բայց երբորդ կոչին, ոտք ելաւ, բացաւ դուռը, և առանց բռն մ'ըսելու, անոնց առջևէն քալելով, առաջնորդեց զիրենք շքեղօրէն պատրաստուած սեղանի մը ըով. երբ

կերան ու խմեցին, իւրաքանչիւրին առանձին առանձին
սենեակներ ցուցուց ու ինքը աներևոյթ եղաւ:

Երկրորդ առաւօտը ծերը, ներկայանալով մեծ եղ-



Սվետոմիտ 7 սվետուի

բօր, նշան ըրաւ որ ետեէն երթայ, ու տարաւ զինքը
ըարէ ստուի մը զիմաց՝ որուն վրայ հետեհալ խօսքերը
զրուած էին. «Այս ղղեակը կախարդութենէ ազատելու

համար՝ կատարուելիք փորձեր: Նախ, անտառին մա-
մուռներու մէջ պէտք է փնտռել իշխանուհւոյն հազար
մարգարիտները՝ որոնք հոն ցրուած են, ով որ յանձն
կ'առնու այս գործը ու չի յաջողիր գտնել մինչև վեր-
ջին հատիկն արևուն մարը մտնելէն առաջ, քար պիտի
դառնայ»:

Երիտասարդը ամբողջ օրը անցուց մամուռներուն
մէջ փնտռելով, իրիկուան դէմ հազիւ հարիւր մարգա-
րիտ գտեր էր. ու քար դարձաւ, ինչպէս գրուած էր:

Միւս օր՝ երկրորդ եղբայրը ուզեց ինքը փորձել,
բայց մեծ եղբորմէ աւելի բաղդաւոր չեղաւ, միայն եր-
կու հարիւր մարգարիտ գտաւ, ու քար դարձաւ:

Վերջապէս կարգը Անմեղին եկաւ ու սկսաւ մա-
մուռին մէջ փնտռել, բայց գործը այնչափ դժուար երև-
ցաւ իրեն որ քարի մը վրայ նստած սկսաւ լալ: Ու ո՞վ
զիտէ որչափ ժամանակ պիտի մնար հոն եթէ մըջուն-
ներու թագուհին՝ որուն կեանքը ազատեց էր, իրեն հինգ
հազար հպատակներովը օգնութեան շհասնէր, որոնք
շուտով գտան բոլոր մարգարիտները ու գեղեցիկ դէզ մը
կազմեցին:

Առաջին փորձը յաջողեց էր. երկրորդ փորձը կը
հրամայէր իշխանուհիին սենեակին բանալին գտնել լճին
յատակը: Ոչինչ խնդիր մըն էր այս՝ երիտասարդին
ազատած բաղբրուն համար. վայրկեան մը ընկղմեցան
ջուրին մէջ ու ապա դարձան թանկագին բանալիովը:

Սակայն երրորդ փորձը շատ աւելի դժուար էր.
հիանալի գեղեցկութեամբ երեք իշխանուհիները կը քնա-
նային իրենց անկողիններուն մէջ, պէտք էր ընտրել
ամենէն աւելի երիտասարդը ու ամենէն աւելի գեղե-
ցիկը: Զուրի երկու կաթիլներու նման մէկմէկու կը նմա-
նէին և անոնց մէջ եղած միակ տարբերութիւնն էր.
քնանալնէն առաջ, մեծագոյնը զգալ մը շաքար կերել
էր, երկրորդը ումպ մը օշարակ խմել էր, ու երրորդը


զգալիկ մը մեղր կերեր էր: Երիտասարդին ազատած մեղուններու թագուհին հասաւ օգնելու իրեն. քնացող գեղանի օրիորդներուն շրթունքները հոտուրտաց և կեցաւ մեղրը կերողին շրթունքներուն վրայ, այսու Անմեղը ճանչցաւ զայն: Ակնթարթի մէջ վերցուեցաւ կախարչութիւնը. զգեալը իր կախարդիչ քունէն արթնցաւ, և քար դարձողները վերստին մարդ եղան: Անմեղը՝ որ ամենէն աւելի խելացին էր ամուսնացաւ երիտասարդ և սիրուն իշխանուհիին հետ և իր հօրը մահուանէ վերջ թագաւոր եղաւ: Միւս երկու իշխանուհիներն ալ երկու եղբայրներուն հետ ամուսնացան:

ԿՐԻՄ ԵՂԲԱՐՔ

Ա. ՈՒ Ի Ի Ծ Ն Յ Ո Ր Ս Ի

Առիւծ և Գայլ, Աղուէս ու Շուն
 Կազմեցին նոր ընկերութիւն.
 Իրարու հետ դաշինք զըրին,
 Որ զատ զատ ինչ որ որսան՝
 Հասարակաց զայ ի սեղան,
 Եւ հաւասար առնուն բաժին: —
 Չեմ գիտեր ո՛ւր և կամ ինչպէս,
 Մէկ մեծղի՛ այժ մ'որսաց Աղուէսն:
 Լուրը շուտով լրսուեցաւ:
 Ընկերքն հաստն ըշտապաւ՝:
 Առիւծ բացած ճիւղաններ՝
 Նայեցաւ մէկ մ'իւր չորս զին.
 — «Մենք, տղաք, ենք չորս ընկեր»,
 Չորսն ալ բաժնեց չորս բաժին.

1. Մեծղի, մեծկակ. շատ մեծ. — 2. Ըշտապաւ, շուտով, աճապա-
 բանօք. — 3. Ճիւղամ, ճանկ կատուի, ստիւծի:



« Առաջինին ես եմ տէր,
 « Ինչպէս որ մեր դաշինքն էր.
 « Գարձեալ երկրորդն ալ ինձ կ'իյնայ,
 « Զի թագաւոր եմ ձեր վրայ.
 « Երրորդ բաժինն ուժովինն է.
 « Ո՛վ է ուժով, թող դէմս ելնէ.
 « Իսկ չորրորդին՝ թէ մէկուն ձեռք երկըննայ,
 « Մեռնի Արիւծ, թէ նա տեղէս ողջ դառնայ»:

Առակիս բարոյական իմաստն է՝ մարդս պէտք է զգուշանայ իրմէ աւելի զօրաւոր անձերու հետ ընկերութիւն ընելէ:

Հ. Ք. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ (Ասակը)

ԿԱՐՊԻՍ ԵՒ ՍԱԹԵՆԻԿ

Կարպիս ու Սաթենիկ կը վազվզէին ծովեզերքը, մինչդեռ իրենց մայրը քիչ մը վերը՝ քարի մը վրայ նստած՝ մտածկոտ, ծովը կը դիտէր: Կէսօրուան կիզիչ¹ արևը կապոյտ ջուրին և աւազուտ գետնին վրայ փրփուր ած էր:

Կարպիսին հայրը ձկնորս էր. ցուրտին, գիշերով՝ զրեթէ ամէն առաւօտ ան իր անդրանիկ որդւոյն հետ կ'երթար ձուկ որսալու: Այս առաւօտ ալ մեկնած էր Կարպիսին հայրը և կէսօրը պիտի դառնար. բայց ահա երկու ժամ կ'անցնի և դեռ նաւակը չի տեսնուիր:

Ծովը որ մինչև հիմակ խաղաղ էր՝ սկսաւ կամաց կամաց ալիքները դէպ ի եզերք քշել, և արեգակն ալ՝ սև ամպերով ծածկուեցաւ: Տխուր ստուեր մը եկաւ կապուտակ ծովուն սև գոյն մը տալու. հովը սաստկացաւ,

1. Կիզիչ, սրտոյ:

և ծովը հիմակ հեռուն ոռնալ կը սկսի և իր կատաղի ալիքները դէպ ի եզերը կը նետէ:

— Մայրի՛կ, հարցուց կարպիս, այդ ալիքները ուսկի՞ց կու գան:

— Չաւակս, ատոնք հեռուններէն կու գան և թըշուառ մարդոց վիշտերը կը տանին. — պատասխանեց մայրը. յետոյ ծովափը՝ շրջագայողները՝ ցուցնելով՝ աւելցուց.

— Ատոնք ամէնքն ալ, որ հարուստներ կ'երևան, ատոնք ալ մեզի պէս իրենց վիշտերը ունին և եկած են ծովը դիտելու և իրենց ցաւերը ալիքներուն տալու:

Այդ ատեն, որ Սաթենիկ առանց իր մօրը մտիկ ընելու ծովը կը դիտէր՝ բացագանչեց.

— Մայրի՛կ, այն նաւակը որ հեռուն կը տեսնուի՝ մեր հայրիկին նաւակը չէ՞: Երեքը միասին ծովը դիտեցին, կէս կարմիր և կէս ճերմակ առագաստը՝ որ հովէն կը տարուբերուէր՝, այո՛, կը վկայէր թէ իրենց նաւակն էր:

— Աղօթեցէք, աղօթեցէք, մեր նաւակն է, խեղճ հայրիկը, խեղճ եղբայրնիդ հիմակ ո՛րքան ալիքներուն հետ կը կռուին. — այս ըսելով մայրը իր զաւակներով ծովեզերքը մօտեցաւ և փոքրիկներուն հետ ծունկի եկաւ և աղօթեցին արտասուելով:

— Մայրի՛կ, մայրի՛կ, ի՞նչ է այն սև բանը որ հեռուն ճերմակ ալիքներուն հետ կը բարձրանայ:

— Կէտ՝ ձուկ մը պիտի ըլլայ զաւակս. բայց դուք երկինք նայեցէք, աղօթեցէք որ ծովը հանդարտի և հայրիկն ու եղբայրը շուտով հասնին:

Գրեթէ կէս ժամ՝ հոն, ծովեզերքը ծունկի եկան,

1. Ծովափ, ծովեզերք. — 2. Շրջագայիլ, պտուիլ. — 3. Առագաստ, ա. ևէլքէն. — 4. Տարուբերիլ, տարուիլ ու բերուիլ. — 5. Կետ, մեծ ձուկ մը:

այո՛ հիմակ ծովը հանդարտեցաւ, և իրենց հօր նաւակը դէպ ի ցամաք կը սկսի մօտենալ, բայց անկից առաջ՝ ալիքները իրենց առջև բերին պատանիի մը դիակը:

— Մայրի՛կ, մայրի՛կ, — բացազանչեց Սթենիկ անհրկիւղ դիակին մօտենալով —, մեր եղբայրը չէ՞:

Մայրը մինչդեռ ալիքներէն իր խղղուած զաւակը ազատեց և վրան խնալով զգայազուրկ¹ եղաւ. կարպիս արտասուելով ըսաւ.

— Մայրի՛կ, դուն ինչո՞ւ չըսիր մեզի թէ այդ անիծուած ալիքները թէև հարուստներուն վիշտերը կը տանին՝ բայց մեզի աղքատներու ալ վիշտեր կը բերեն...

Հ. ՄԿՐՏԻՉ ՊՈՏՈՒՐԵԱՆ

Մ Կ Ր Ա Տ Ն Ո Ւ Ծ Ա Ռ

Մկրտտ. — Ի՛նչ հասակ է այդ, այն ի՛նչ երկայն մազեր են՝ սիրելի՛ ծառ:

Ծառ. — Գարունը հասաւ, քեզի պէտք ունիմ, շնորհք ըրէ, ձև մը տուր ինձի:


Մկրտտ. — Ահա կտրեցի, ձև տուի քեզի, անտառին ու բուրաստանին զարդ ըրի զքեզ:


Ծառ. — Եւ անցաւ երկու օր, տեսայ նոյն մկրտտը սնարիս ըովը. ան կը շարժէր երկաթէ շրթունքները: Ի՛նչ կ'ուզես մկրտտ, հարցուցի իրեն: Եւ ան պատասխանեց:

Մկրտտ. — Կ'ուզեմ քեզի ձև տալ, գարունը հասաւ գեղեցկանալու ես:

Ծառ. — Սկսաւ դարձեալ կտրել ոստերս: Բայց այս անգամ պարտիզպանը փոխուած էր: Ոտքիս տակը

1. Զգայազուրկ ըլլալ, ինքզինքը կորսնցնել, մարել:





փոռուած էր խաղաղ լճակը, դէմքս տեսայ պաղպաղուն
ջուրին վրայ, մկրատը զիս տձեցուցած էր:

Մկրատ. — Ծառ այս ի՛նչ անխնամ վիճակ ս՛ու-
նիս, ձեէ դուրս ես ելած: Թող որ քեզ կտրեմ, կոկիկ
ձե մը տամ:

Ծառ. — Այս անգամ ուրիշ մըն էր, ան ալ անխը-
նայ սկսաւ կտրել սաղարթներս, ճիւղերս: Գլուխս կա-
խած՝ պատկերս որ դիտեցի լճակին վրայ, ես ինքս
ստակացի ինծի տրուած ձեերէն. տձե այլանդակ կոճղ
մըն էի դարձեր: Երեք պարտիզպան ձեռք ձեռքի տուած
մրցանքի ելած, իրենց աշակերտի փորձերը վրաս ուզե-
ցին կատարել: Երբ անցան օրեր, ու վերջին պարտիզ-
պանը քովէս անցաւ. ըսի ես անոր ձեռքի մկրատին. —
Բարեկամ տես ինչ խրղճալի կացութեան մէջ զիս դրիր:

Մկրատ. — Ի՛նչ եղաւ, ի՛նչ կայ:

Ծառ. — Մկրատ քիչ մըն ալ գթացիր, կտրէ քու
տիրոջ եղունգներ:

Մկրատ. — Անոնք չափաւոր են:

Ծառ. — Բայց նորէն կտրէ:

Մկրատ. — Բայց կտրելու տեղ չկայ:

Ծառ. — Մինչև արմատը կտրէ:

Մկրատ. — Բայց ցաւին ի՛նչպէս դիմանայ:

Ծառ. — Անգութ, ես ալ հոգի չունիմ եղունգին
չափ, քանի՛ պարտիզպան զիս ըրին իրենց զուարճու-
թեան նիւթ: Կտրեցին, կտրեցին, կտրեցին: Յաւը մինչև
սրտիս երակներուն հասուցին:

« Ամէն մարդ չափ մը ղնելու է իր ո՛ւկէ եռան-
դին... »:

Հ. ՍԻՄՈՆ ԵՐԵՄԵԱՆ



ՏՂՈՑ ԵՐԳՆ ԵՒ ՊԱՐԸ

Քարնան կամ աշնան գեղեցիկ իրիկունները, տեսեր եմ մեծ ու փոքր, մանչ և աղջիկ պզտիկներ, աչքեր՝ սև ու երկնագոյն, ծաւի՝ և մեղուչ¹, մազեր՝ սև և շագանակագոյն, շէկ ու խարտեաշ, որոնք ձեռք ձեռքի տուած մէկմէկու մէջ մը մտնեն, կը խառնուին, կը պարենն բոլորածև։ Անթարթ կը նայէին մէկմէկու երես ապա աշուրնին կը դարձնէին դէպ ի երկինք, ու մանչերը՝ հաստկեկ, աղջիկները՝ արծաթեայ, պզտիկները թոթով ձայնով կ'երգէին։ Կը պարէին և կ'երգէին. ու հակայ ծառերը կը դիտէին այդ անուշ պարը ծածկելով զայն իրենց շուքովն և ընկերելով դաշն մրմունջով, ու արևը կը համբուրէր այն զուարթ ճակատները, ու լուսապսակով կը պսակէր այն արձակ կամ հիւսուած մազերը՝ սիրահարուած այն չքնաղ և քաղցր կեանքերուն։ Կ'երգէին և կը պարէին, և այն սիրուն փոքրիկ մարմիններուն շարժմանց մէջ կը խաղար կեանքի զուարթութիւնը։

Ճ. ՔԱՐՏՈՒՉՉԻ



1. Մալի, կապտագոյն։ — 2. Մեղուչ, անուշ աչուի։

ԽԹՄԱՆ ՊՈՒՊՐԻԿԸ՝

Մենունդի խթման իրիկունը, Շուշանիկ իր մօրը հետ շուկան ելած էր: Կը ձիւնէր, բայց իրենք չէին մրսիր վասն զի ձմեռնային զգեստներով պատասպարուած էին:

Նոյն իրիկունը մեծ եռուզեռ՝ կար շուկային մէջ, հարուստները իրենց զաւակաց նուէրներ կը զնէին. և մուրացիկ աղքատներն ալ հարուստներուն կ'երկնցնէին ձեռքերնին՝ հացի մը ողորմութիւն խնդրելու:

Երբ շքեղ խանութի մը առջև հասան՝ Շուշանիկին մայրը հարցուց.

— Անուշիկս, ի՞նչ կ'ուզես որ զնեմ քեզի:

— Մայրիկ, սա պուպրիկը շատ կը սիրեմ, ի՞նչ գեղեցիկ աչքեր ունի և ի՞նչ սիրուն զգեստ:

Մայրը քանի մը վայրկեան յետոյ այդ սիրուն զգեստներով պուպրիկը Շուշանիկին բազկին մէջ դրաւ: Չայն համբուրեց Շուշանիկ, և յետոյ ըսաւ.

— Մայրիկ, սա փոքրիկ գլխարկն ալ պուպրիկիս համար գնէ, դուրսը ցուրտ է, չըլլայ թէ մրսի:

Քիչ ետք գլխարկն ալ գնեց և զլուխը դրաւ:

— Բայց մայրիկ, փոքրիկ ձեռնոցներ չկան, դուրսը ձիւն կու գայ, պուպրիկիս ձեռքերը կը սառնին:

Քիչ ետք սպիտակ ձեռնոցներն ալ գնեց:

Մայրը հարցուց.

— Դեռ ի՞նչ կ'ուզես, աղջիկս:

— Վաղը ծնունդ է, հրեշտակը բոլոր փոքրիկներուն՝ երկնքէն նուէրներ պիտի բերէ, կ'ուզեմ որ իմ

պուպրիկիս ալ շաքարներ և կոլահատներ¹ բերէ, ըսաւ
Շուշանիկ զիմացի շաքարեղինաց խանութը ցուցնելով:

Մինչդեռ մայրը վճարելու գնաց՝ Շուշանիկ խանու-
թին դրան առջև իրեն հասակակից աղջիկ մը տեսաւ,
որ գեղեցիկ էր իր պուպրիկին չափ, բայց ոտքերը մերկ
էին, զգեստները պատուած, գլուխը բաց, և որ ցուր-
տէն կը դողդղար:

Անծանօթ աղջիկը ձեռքը Շուշանիկին կարկառեց².

— Ա՛հ, խեղճ աղջիկ, գլխարկ չունի՞ս. ահաւասիկ
քեզի նոր մը:

Եւ անոր գլխուն վրայ դրաւ պուպրիկին գլխարկը:
Յետոյ շարունակեց.

— Զգեստ չունի՞ս. ահաւասիկ քեզի մետաքսէ
զգեստ մը:

Եւ սկսաւ պուպրիկին զգեստը հանել. մինչդեռ
մուրացիկ աղջիկը գեղեցիկ գլխարկը վեհանձն փոքրիկ
օրիորդին ետ տալով՝ կը թախանձէր³.

— «Շնորհակալ եմ, ես միայն շերտ մը հացի
դրամ կ'ուզեմ»:

Այդ վայրկենին Շուշանիկին մայրը մօտեցաւ և
ներկայ եղաւ այս զգայուն տեսարանին. անգամ մը
համեստ աղքատ աղջկան, անգամ մ'ալ իր վեհանձն
զուակին նայեցաւ. չէր գիտեր որո՞ւ վրայ աւելի հիա-
նար: Ուրախութենէն լացաւ:

Մայրիկ, ըսաւ Շուշանիկ, պուպրիկիս զգեստը իրեն
պզտիկ կու գայ. ինչո՞ւ Մննդեան հրեշտակը ասոր ալ
նուէրներ չէ բերած:

— Բերած է, բերած է. — ըսաւ մայրը, և զայն
ներս տանելով՝ գլխէն մինչև ոտքը նորոգեց:


Երբ աղքատ աղջիկը դուրս եկաւ՝ այնքան գեղեց-

1. Կոլահատ, շոգութի: — 2. Կարկառել, երկեցնել: — 3. Թա-
խանձել, շատ խնդրել:

կացած էր՝ որ Շուշանիկ իր պուպրիկը անոր քով տարաւ, երկու գեղեցիկ դէմքերը իրարու հետ բաղդատելու համար, և յետոյ պուպրիկը մօրը ձեռքը տալով՝ բացագանչեց.

— Մայրի՛կ, այս մեծ պուպրիկը աւելի գեղեցիկ է: — Եւ մանկական բազուկներով զայն գրկեց ու համբուրեց. մինչդեռ խանութին յաճախորդները զգածուած կը նայէին և մայրիկն ալ կ'արտասուէր:

Հ. ՄԿՐՏԻՉ ՊՈՏՈՒՐԵԱՆ



Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Ց

	Էջ
Գալարչին և Խորովածը. — Հին Իտալ. առակ	7
Գինովը և Իր կինը. — Կ. Մ. Ռուֆոյ.	8
Թխամայրը. — Յ. Ք. Անտէրսըն.	9
Նաղկունք. — Հ. Ք. Քուչներեան	11
Վազր. — Հ. Ս. Երեմեան.	14
Արջը. — Յ. Ք. Անտէրսըն.	16
Պահապան հրեշտակ. — Հ. Ա. Ղազրիկեան	18
Իշխանուհին և ուրուն. — Յ. Ք. Անտէրսըն	19
Մանուկը. — Հ. Մկրտիչ Պոտուրեան	20
Օրհասական զինուորը. — Հ. Ս. Երեմեան	22
Աքլոր և Մարգարիտ. — Հ. Ք. Քուչներեան.	22
Մանկիկն ու Թռչուն. — Տըվուալ	26
Մրբիկը. — Կիւսդաւ Շըվապ	27
Փառք տանք Աստուծոյ. — Ալիշան	28
Նուխը և ամպը. — Պեարոս Թուար	30
Կատուն և Սոխակ. — Հ. Ք. Քուչներեան	31
Ամէն բան Աստուած կը ստեղծէ. — Հ. Ա. Ղազրիկեան	33
Զմեռը և զարունը. — Ն. Թոմազէոյ	33
Յարդէ Պոչը. — Թեմիստոկլէս Կրատի.	34
Պոչատ Աղուէս. — Հ. Ք. Քուչներ	36
Մանկավարժին Ակնարկ մը. — Հ. Ա. Տիրոյեան	38
Աստուած ամէն տեղ է. — Ալիշան	38
Շուն. — Հ. Ս. Երեմեան	43
Ըլլալ և Երեւալ. — Հ. Ա. Ղազրիկեան.	45
Թիթեանիկ և Մեղու. — Նոյն	46
Պօղ և Վիրգինեայ փոխադարձ սէրը. — Պօղ և Վիրգինէ.	46
Գրաճարակ մուկերն. — Ա. Փանոսեան.	48
Նախախնամութիւն. — Ալիշան	52
Պայծառ Ատղեր. — Վիկ. Աղանուր	55

Մայրիկին երգը. — Լուի Ռադիզզոն	55
Կանկաձուկն. — Գ. Կոծծի	59
Պարտիզականը և որսորդը. — Ֆ. Տ. Կուէրացի	61
Շատ են Աստուծոյ գործերը. — Հ. Ղ. Ալիշան	61
Իննդեան թռչունները. — Հ. Տըլաբորդ	64
Ազգասիրութիւն	70
Հայոց Աշխարհիկ. — Ալիշան	74
Իմ Աստղը. — Հ. Կարապետ Տէր Սահակեան	76
Աքաղաղը և մուկը. — Կ. Մ. Ռուֆոյ	78
Աղուէս, շուն և քթաղաղ. — Ն. Թոմազէոյ	82
Ամպերու ճամբան. — Հ. Կ. Տ. Սահակեան	84
Ձիւն. — Ասա Նեկրի	86
Կրակ, Ջուր և Պատիւ. — Գ. Կոծծի	90
Փիղ. — Հ. Ս. Երեմեան	91
Սասանան և Շուքը. — Արդուրոյ Կրաֆ	93
Սնապարծ Ջորին. — Հ. Ք. Քուշներեան	95
Արևելքէն կու գաս. — Հ. Կ. Տ. Սահակեան	96
Տանձերը. — Գ. Կոծծի	98
Ճանճը և Տորիա. — Յ. Ճուսդի	102
Ճանճ. — Վ. Վ. Մինասեան	103
Արծիւր և օձը. — Մէլքիթէ Չէզարուզի	108
Էշը դատաւոր. — Նիկողայոս Ֆորդէկուէրրի	109
Մեղուներու թագուհին. — Կրիմ եղբարք	111
Առիժն յորսի. — Հ. Ք. Քուշներեան	115
Կարպիս և Սաթենիկ. — Հ. Մկրտիչ Պոսուրեան	117
Մկրատն ու ծառ. — Հ. Սիմոն Երեմեան	119
Տղոց երգն և պարը. — Ճ. Քարտուչի	123
Իթման պուպրիկը. — Հ. Մկրտիչ Պոսուրեան	124



ԳՍԱՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՆՁԻՆ. — ՊԼԷՔԻ. Թրգ. Հ.	
Ա. Ղազարյան	- 60
ԳՊՐՈՑ ԲԱՐՈՒՑ. — ՊԼԱՆՇԱՐԻ. Թրգ. Հ. Ա. Քաջուժի	8 50
ԳՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ. — գրեց Տորթ.	
Վ. ԹՈՐԳՈՄԵԱՆ	1 50
ԵՂԵՒԻՆԻՆ ՏԱԿ. — Հ. Ղ. Ամբաս. Թրգ. Հ. Վաճ.	
Յովաննէսեան 1981	1 50
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՄՂՈՆ. — Ամերիկայի ներքե. Էմբ.	
լիոյ Սարգսրի. Թրգ. Հ. Յակոբոս Բոսպորյան	
1981	2 —
ԶԲՕՍԱՐԱՆ ՄԱՆԿԱՆՑ. — 6 նոր. պատանիներու նամար	9 —
ԹԱԳԱՒՈՐ ԼԵՐԱՆՑ. — ՎեՊ. Ե. ԱՊՈՒԻ. Թրգ. Հ. Ա.	
Գանասրճեան	1 50
ԼՃԱԿԻՍ ԶԿՆՈՐԱՐ. — ՎեՊ. գրեց Յ. Յ. ԻՍԱՎԵՐՏԵՆՑ	1 —
ԼՈՒՂՈՎԻԿՈՍ ԺԶ. — Սրտաշարժ պատմութիւն. գրեց	
Գ. Գ. ԺԵՂԱԵԱՆ	2 —
ԽՕՍԵՑԵԱԼԻ. — ՎեՊ. ՄԱՆԾՈՆԻԻ. Թրգ. Հ. Ե. Հիւրմիւլ.	
(պատմական մասը գրարար, խօսակցութիւնը .	
աշխարհագրար) 2 նամար (Տես ևս ՆՇԱՆԱՐՆԵՐԸ)	4 —
ԿԱՏԼԱԿՆԵՐ. — ՎեՊ. գրեց Յ. Ս. ԵՐԵՄԵԱՆ	1 50
ԿԵԱՆՔԻՆ ԼԱՌՈՐԵԿԻՆ. ազոց նամար բարբառական դա-	
տեր, զերտական, կրթական, զուարճայի և պատկերա-	
զարդ. Հ. Ա. Յովսէփեան. էջ 882, 1981	2 60
Կ. ՊԱԼԻՍ. — Տպատրութիւնք. գրեց Յ. Ս. ԵՐԵՄԵԱՆ	2 25
ՀԱՅ ԿՍՑՍԵՐՔ ԲԵՒԶԱՆԴԻՈՆԻ. — գրեց Յ. Կ. ՏԷՐ	
ՍԱՀԱԿԵԱՆ. 2 նամար	4 —
ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ ԺԹ ԳԱՐՈՒ (ռուսաւսագ). —	
գրեց Յ. Բ. ԶՐԱՐԵԱՆ	1 —
ՀԱՆԳԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ. — ազգային ՎեՊ. գրեց Յ. Ն.	
ԱՆԴՐԻԿԵԱՆ	1 —
ՀԻՆ ՕՐԵՐ ԵՒ ԱՑԻ ՕՐԵՐՈՒՆ ՀԱՅ ՄԵԾԱՏՈՒՆ-	
ՆԵՐՐ (1850-1879). գրեց Յ. Գ. ՄՐՄՐԵԱՆ	1 —
ՃԱՆԱՊԱՐ ՀՈՐԳՈՒԹԻՒՆ Ի ՊՈՄՊԷՑ ՀՆԿԱՅ. —	
գրեց Յ. Յ. ԻՍԱՎԵՐՏԵՆՑ	1 50
ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՔՈՒՆ. — գրեց Յ. Ս. ՍՄԵՐԱՆ	1 50
ՄԱՅՐ, ԱՌԱՅԻՆ ԴԱՏԱՐԱԿ. — Թրգ. Հ. Գ. Զարբանաշեան	1 40
ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ ՄԱՆԿԱՆՑ — 15 նամարիներ ազոց	
նամար	6 —
ՅԱՂԱԳՍ ՄԱՐԴԿԱՑԻՆ ՊԱՐՏՈՒՑ. — Ս. ՓԷՆԻՆՔՈՅԻ.	
Թրգ. Հ. Գ. Այվազովսկի	- 50
ՅՈՎԱՆՔ ԳԵՂԵՑԻԿ. — ՎեՊ. ՊԻՂՈՊԷԻ. Թրգ. Հ. Վ.	
ՇԷՂՄԱՆԵԱՆ	1 50
ՅՈՒՇԻԿՔ ՀԱՑՐԵՆԵԱՑ. — գրեց Յ. Ղ. ԱԼԻՇԱՆ. 2 նոր.	6 —
ՅՈՒՇԻՔ ԼՈՂԴՐԱՑԻ. — Ճանապարհորդական ազատրու-	
թիւններ. Ե. ՏԷ ԱՄԻԶԻՍԻ. Թրգ. Հ. Յ. Թարսեան	- 50

(434)

300

774

Ձուից ֆր.

ՆՇԱՆԱԾՆԵՐԸ. - Վեգ. ՄԱՆՇՈՂԻ աշխ. Մար թրգ.	
Հ. Ա. Ղազիկյան	5 —
ՆՈՒԻՐ ՄԱՆԿԱՆՑ. — Փաքրիկ ստամուտքեր պոչո կա.	
սար գրեց զ. Ա. ՂԱԶԻԿՅԱՆ.	- 30
ՇԱՐՔ ԸՆՏԻՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ. - Վեգեր զամազամ	
ամուսնի ձեղիմակաց. 9 հատր	13 50
Հատր կ'արճէ .	1 50
ՇՆՈՐՀԱԼԻ ԵՒ ՊԱՐԱԳԱՑ ԻՒՐ. - գրեց զ. Ղ. ԱՆՇԱՆ	6 —
ՈՍՏԱՆԻԿ ԼԵԶՈՒՆ. — Դպրոցականաց համար հանկի	
գիրք. Ե. Տէ ԱՄԻԶԻՍԻ. թրգ. Հ. Ա. Զովաէփեան	3 —
ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՅԱՅՐԱՐԱՏ. — ՄԱՌԴՈՎՅԷՎ	
թրգ. Հ. Ք. Գալստիսյան	- 60
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ. - 3 հար. 1814-1878	
գրեց զ. Մ. ՆՈՒՐԻՍՅԱՆ	12 —
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ. — 2 հար. գրեց զ. Ս. Տէր	
ՄՈՎՍԷՍԵԱՆ	6 50
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ. - Յ. ՊԱՊԻՆԻ. թրգ. Հ.	
Ա. Ղազիկյան .	8 —
ՊՕՂ ԵՒ ՎԻՐԳԻՆԷ. - Վեգ. ՊԵՆԱՐՏԷՆ ՏԸ ՍԷՆ ԲԻՆՈՒ.	1 50
ՋՐՀԵՂ ԵՂԸ. - զ. ՍԷՆՔԻՆԷՎԻՉԻ. թրգ. Հ. Ա. Գոնտարճեան	3 —
ՌՈՊԷՆՍՈՆԻ ԱՐԿԱՆՔ. - Վեգ. ՏԸՅՈՒՆԻ. թրգ. Հ. Մ.	
ԲՉԿԵԱՆ	2 50
ՍԻՐՏ. — Դպրոցական աշակերտի կեանքի նկարագիր. Ե.	
Տէ ԱՄԻԶԻՍԻ. թրգ. Հ. Ա. Զովաէփեան	2 50
ՍՐՈՎ ՀՐՈՎ. — Վեգ. զ. ՍԷՆՔԻՆԷՎԻՉԻ. թրգ. Հ. Ա.	
Գոնտարճեան	5 50
ՎԵՍՏԵԱՆ ԿՈՅՍ. — Վեգ.	2 —
ՎԻՊԱԿՆԵՐ. — թրգ. Հ. Ա. Ղազիկյան .	- 60
ՏՂԱՔՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ՃԱՌԵՐ. - Ե. Տէ ԱՄԻԶԻՍԻ.	
թրգ. Հ. Ա. Գալստիսյան	1 —
ՏՈՒՐԿԻՆ. — Վեգ. Հայկական պատմութեան. գրեց զ.	
Ս. ԵՐԵՄԵԱՆ	2 —
ՅՈՑՑՔ ԱՍՏՈՒՄՈՑ. — Բնիկրդան գիրք պոչո կամար.	
գրեց զ. Ղ. ԱՆՇԱՆ	- 50
ՓԱՐԻՈՒԱ. - Վեգ. Հին Քրիստոսէից կեանքն. ՈՒԱՅԶՄԱՆԻ	3 —
ՓԱՐԻԶՈՒ ՑՆՑՄՈՒՆՔՆԵՐԸ. - Կրտսայի մեծ յեղա-	
փոխութեան ժամանակի գէղարք. ՄԱՐՍԻՄ ՏՆԻՔԱՆԻ.	
թրգ. Հ. Մ. Նուրիսյան	1 50
ՓԱՆ ՄԻՔԱՅԷԼ ՎՈՂՈՏԻՈՎ ՍՔԻ. Վեգ. զ. ՍԷՆՔԻՆԷՎԻՉԻ	5 —
թրգ. Հ. Ա. Գոնտարճեան	
ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ. - գրեց Գիրայ. Ի. ՓԱՓԱՋԵԱՆ.	- 50
ՖԷԼԻՉԷ ՌՈՊՈՒԻՆ. — Մանուկարտի մը վերջին վայր-	
կանները. ՌՈՉՄԻՆԻ. թրգ. Հ. Ռ. Թրեանց .	- 50

ԳԱՄ Հիմնարար Գիտ. Գրադ.



901000774

